№ 15 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 23

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 23 № 15

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ!!

Ով չէ ստացել ընտրողական թերթիկներ ԹՈՂ ԴԻՄԷ քաղաքային վարչութեանը, որտեղ չը հասցրած ծրարները տրվելու են իրանց տէրերին մինչև յունվարի 27-ը։

Իսկ այն անձինք, որոնք արդէն ստացել են թերթիկներ, որոնց վրան նախապէս գրված են լիազօրների անունները, իրաւունք ունեն ստանալու նոր թերթիկներ քաղաքային վարչութեան մէջ, ներկայացնելով հները, մինչև իսկ ընտրութիւնների օրը։

առ. 3—5

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

„ՄՈՒՐՃ“

Գրական, հասարակական և քաղաքական

ԱՄՍԱԳԻՐ

(Նոր շրջան VII տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստանի և Պարսկաստանի համար՝ տարեկան 10 ր., կէս տարին 6 ր., ամսական 90 կ.։ Արտասահմանի համար՝ տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր. (18 ֆ.), ամսական 3 ֆ։

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս (5—5 ր.). երկրորդ վճարը լինում մայիսին։ Տարր. դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների, գիւղացիների և բանւորների համար բաժանորդագինն է (Ռուսաստ.) 8 րուբլի տարեկան, որ կարելի է վճարել մաս-մաս (4—4 ր.)։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց, տ. № 12) և «Գուտտենբերգ» գրախան. (Երևան. հրապ) և «Новая Рѣчь» գրախան. (Գոլովինսկի պրօսպ. Թատր. դիմաց)։

Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала «МУРЧЪ»։

Արտասահմանից՝ Tiflis, Rèdactio de la revue «OURTCH».

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ընդունվում է ամէն լեզուով։ Յայտարարութիւնների համար վճարում են.—1 երես բոլոր յայտարարութեան համար 10 ր., 1/2 եր. 5 ր., 1/4 եր. [illegible] ր., տողատեղ (կորպուս)—40 կ.։

3—10

Խմբագիր՝ Լևոն Սարգսեան

Բացված է բաժանորդագրութիւն

ՀԱՅԵԼԻ

Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որը երբեմնապէս լոյս կը տեսնի «Հայելիի յաւելուած» անուան տակ։

Տարեկան բաժանորդները կը ստանան՝

1) 50 № «Հայելի»։ 2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը առանձին ալբօմ կը կազմեն։ 3) 2 մեծադիր գունաւոր պատկեր հայկական կեանքից (50×60 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատկական համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին)։ 4) 1 պատի տախտակ պատկերազարդ Օրացոյց 1908 թ.։ 5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական նկար։

Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից նոյեմբեր։

Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 րուբ.։ Կէս տարին՝ 2 ր., դուրսը՝ 2 ր. 50 կոպ.։ Երեք ամիսը՝ 1 ր., դուրսը 1 ր. 25 կ.։ Արտասահման՝ տարեկան 6 րուբլի, կէս տարին 3 րուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3. կամ Tiflis, Rédaction du journal «Haeli».

Խմբագիր՝ Վ. Պետրոսեան, Հրատարակիչ՝ Բ. Ճէպէյեան

(ա. օ.) առ. 10—10

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Էլիզավետինսկայա փողոց № 79, տելեֆոն 1026.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր

ՄԻՔԱՅԷԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—ջղային, ներքին հ. և էլէկտրօբուժութիւն։

Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ։

Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

Ս. Ա. ԼԻՒՐԻ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի հ։

Մ. Գ. ԿԻՄՈՆՏ.—1—2 ժ. վիրաբուժական հ.։

Գ. Ա. ԲԷԲԷՐ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.։

Ի. Ն. ԹՈՒՄԱՆՈՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն։

Հիւանդանոցում բժշկումն հիպնօզով, կատարվում են միկրօսկօպիական, բակտէրիօլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ծծմայրների ընտրողութիւն։

Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կոպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան. Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին համարներից։

առ. Ե. Հ. Կ. 15—100

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՍԱՓՐԻՉ“

հումոր, սատիրիկ-սիմվոլիք

ամսաթերթի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս տեսաւ

VI-րդ համարը,

որը և ուղարկվեց բաժանորդներին նաև

„ԱՆԻ“

հրատարակչ. ընկեր. բաց նամակների I սերիան, 8 հատ, գինն է 60 կոպ.։ Բաժանորդներին ուղարկվեց ձրի իբրև «Սափրիչի» 1 պրէմիան։

Տարեկան բաժանորդագինն է պրէմիայով 2 րուբլի, իսկ Անդրկասպեան երկրի և արտասահմանի համար 2 րուբլի 50 կոպ.։

Հասցէ՝ С. П. Б. Казанская 46 18.

«ՍԱՓՐԻՉ»-ի խմբագրութիւն

Ե. Շ. առ. 1—25

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԴԷՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ՆԱՆՋԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բգի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.։

Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՈՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բգի և ականջի, երկ. րեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիպնօզով ամենայն 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

Բժ. Ա. Տ. ՐՕԶՄԱՐԻԿՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք 4—5 ժ., երեք. շաբ. 3—4 ժ.։

Բժ. Ն. Ի. ՆԷՈՒՍՄԻՆ.—Աչքի, երկ., ուրբ., 12—1 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ., չորեքշ., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.։

Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ
Բժ. Կ. Ի. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ } կլինիքական անալիզ

Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմ. մասսաժ, ելեքտր. 4—6 ժամ.

Մ. Ե. ԳՕՐՕԳԵՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.

Ս. ԽԱ. ՊԱՒԼՕՎՍԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Բժ. Կ. Գ. ԴՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամեն օր 12—1 ժամը։

Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երեխ., երեքշ., հինգշ. շաբ. —5 ժամը։

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անդամահատել, անալիզ ենթարկել, հիպնօզել, ատամների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 48—144

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, յունվարի 28-ին նշանակված է պ. պ. անդամների ընդհանուր ժողով աւագների և ստուգիչ մասնաժողովի անդամների քուէարկութիւնը շարունակելու համար։

(Ե. Հ. Կ.) 1—3

ԿՕՇԻԿՆԵՐԻ

ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

(1901 Թ. արժանացաւ մեդալի)

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ ԹԷ տղամարդկանց և ԹԷ կանանց նուրբ տեսակի

ԿՕՇԻԿՆԵՐԻ

ԳՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ

Պատուէրները կատարվում են արագութեամբ և երաշխաւորութեամբ։ Վէլեամինովսկայ փողոց, տ. Խօսրոեվի։

Դարչինեան

առ. (ա. օ.) 3—12

Արհեստական չէչ

(искуственная вощина)

Պատրաստում եմ ձեռնտու գնով, փետրվար և մարտ ամիսներում

Հասցէս Сел. Бол. Караклисъ Аветису Агабабянцъ.

առ. օր. մ. 2—15

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազատ քուէ. Վերջին տեղեկութիւններ. Ընտրութիւնները Կովկասում. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Նամակ Պետերբուրգից. Սովի դէմ. Մամուլ. Հնագիտական ընկերութեան նիստը. Հասարակական դատաստանի առաջ. Գիւղական ցաւերից. Երկրորդ նախապատրաստական ժողովը Կարսում. Դաշնակցութիւնը հայերու առաջ. Պատճէն արձանագրութեան. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԱԶԱՏ ՔՈՒԷ

I

Միայն հինգ օր ունենք մեր տրամադրութեան տակ, մինչև ընտրութեան օրը։

Եւ այդ հինգ օրվայ ընթացքում պէտք է իւրաքանչիւր ընտրող վերջնականապէս որոշէ, թէ ինչ անձերի անուններ է նա մտցնում իր ընտրական ցուցակի մէջ։

Իւրաքանչիւր ընտրող, վերցնելով իր ձեռքը ընտրական ցուցակը և մօտենալով ընտրական սափորին, ունի կատարելու մի սուրբ պաշտօն, այն է տալու իր քուէն կամ նոյնն է, թէ իր ձայնը այն մարդկանց, որոնց նա համարում է ամենայարմար ներկայացուցիչներ հասցնելու իր ցանկութիւնները, ուր հարկաւոր է։

Եւ քանի որ քուէն ունի կատարելու կարևոր դեր, անշուշտ, անհրաժեշտ է, որ ընտրողը բռնադատված չը լինի, ճնշումների և խաբեբայութիւնների չենթարկվի, այլ կատարեալ ազատութեամբ կազմէ իր ցուցակը կամ իր հարազատ կամքով յարէ այս կամ այն հոսանքներին, որոնք գոյութիւն ունեն երկրի մէջ։

II

Ժողովրդական քուէն պէտք է պահպանվի իր սրբութեան և հարազատութեան մէջ։

Եւ ամեն միջոց ու ջանք պէտք է գործ դնել, որ ժողովրդի մէջ չը խախտվի վստահութիւնը դէպի քուէի գաղափարը։

Իսկ նա խախտվել և կործանվել կարող է, եթէ այդ քուէի հետ անարժան և ստոր խաղեր կը խաղացվեն, եթէ նրանք կը կեղծվեն, կը նենգվեն ու դաւերի զոհ կը դառնան։

Մենք նոր ենք սկսում ապրել քաղաքական կեանքով և պէտք է օգտվենք ընտրութիւններից ժողովրդի քաղաքական դաստիարակութեան համար և սովորեցնենք ժողովրդին տէր դառնալու իր սեփական գործերի կառավարութեան։

Ազատ քուէ։

Այո, միայն ազատ քուէն կապահովէ ու կերաշխաւորէ ժողովրդական ձայնը, որ ձգտում է երևան գալ հասարակական ասպարէզում։

III

Քաղաքացիներ։

Գնահատեցէք ձեր քուէի ազատութիւնը և մի թողէք, որ մարդիկ ճնշեն ձեր կամքը և ձեր ձայնը։

Վերաբերվեցէք գիտակցաբար դէպի ձեր քուէն և տուէք ձեր ձայնը չը բռնադատված ոչ ոքից։

Յարգեցէք ինքներդ ժողովրդական քուէի գաղափարը, և այնպիսի հասարակական կարծիք հաստատեցէք, որ ոչ ոք չը համարձակի խաղալ ձեր քուէների բաղդի ու վիճակի հետ։

Այն ժողովուրդը, որ չը գիտէ պաշտպանել իր քուէի ազատութիւնը, ապահովել քուէի անձեռնմխելիութիւնը և դարձնել նրան իր հարազատ արտայայտութիւնը, նա դեռ ընտրող չէ այդ բառի էական իմաստով. նա ազատ քաղաքացի չէ, այլ ստրուկ կողմնակի ազդեցութիւնների, գործիք մարդկանց ձեռքին և խաղալիք քաղաքական յորձանքում։

Ազատ տէր եղէք ձեր քուէին։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Էջմիածնից ստացանք հետևեալ հեռագիրը՝

Էջմիածին, 21 յունվարի

Ճեմարանի երկու ուսանողներին ար[illegible] կեղծ է, փաստերը խեղաթիւրված են։

Աւգալբէգեանը ճեմարանի ուսանողութեան և աշակերտութեան ներկայացուցիչը չէ, գուցէ և փոքրիկ խմբի կողմից է միայն։

Մանրամասնութիւնները նամակով։

Ուսանողութեան և աշակերտութեան անունից բողոքելով, ի նկատի ունենք միայն վերջին դասարաններն ու երեք լսարանները, որոնց մէջ կան ընդամենը 151 սաներ։

Լիազօրութիւն ունենալով 98 ընկերների կողմից, արտայայտում եմ մեր խորին բողոքը։

Ուսանող Վահան Տէր-Գէորգեան

Թիւրքահայ թերթերը հաղորդում են, թէ մի հարուստ հայ—հաւանականաբար Թիւրքահայ—որ գտնվում է Եւրոպայում, մտադրութիւն ունի մի խոշոր նուիրաբերութիւն անել Կ. Պօլսի Ազգային Հիւանդանոցին, այն է 12,000 ոսկու մի գումար, այսինքն մօտ 120,000 ր.։ Այդ փողով նուիրատուն ցանկանում է գնել մի կալուած, Պօլսում, 6% եկամուտ բերող և այդ հասոյթը յատկացնել Հիւանդանոցին։ Յիշեալ մեծատունը, հաւաստում են, որ անզաւակ է։

Միևնոյն ժամանակ, դարձեալ յօգուտ նոյն Ազգային Հիւանդանոցի, անցեալ ամիս, Կ. Պօլսի եկեղեցիներում կարդացվել է մի պատրիարքական կոնդակ, որով ժողովրդին յանձնարարվում է, իր կարիքների գոհացման համար, գնել Ազգ. Հիւանդանոցի պատրաստած իրերից։ Ինչպէս յայտնի է, այդ Հիւանդանոցն ունի պապիրօսի Թուղթ, կահ կարասիների մի արհեստանոց, որ գտնվում է Հիւանդանոցի շինութեան կից։

Կոնդակը մասնաւորապէս ծանրանում է Հիւանդանոցի ամեն տարի պատրաստած օրացոյցի վրա, որը պարունակում է նաև շատ օգտակար ծանօթութիւններ և գիտելիքներ և որի կազմութիւնը յանձնվում է ամեն տարի խոհուն ու ձեռնհաս անձերի, գրական գործիչների։ Պատրիարքական կոնդակը օրացոյց գնելու յանձնարարութիւնը ուղղում է մասնաւորապէս առևտրականներին։

Այդ օրացոյց գնումով կրկին օգուտ է ձեռք բերվում. գոհացնել իր կարիքը օժանդակել մի Բարեգործական վաղեմի Հիմնարկութեան։

Յունվարի 17-ին, մօտաւորապէս երեկոյեան ժամի 7-ին, 6 հոգուց բաղկացած ոստիկանական պահակախումբը Կրասնովօդսկայա փողոցից անցնելու ժամանակ, ինչպէս այդ մասին տեղեկացնում է ոստիկանութիւնը, երկու կողմից—Գիմնազիական և Կարանտիննայա փողոցների անկիւններից ենթարկվել են հրացանաձգութեան։ Պահակներն էլ իրանց կողմից են սկսել հրացանաձգութիւն, որի ժամանակ սպանվել է Նոր-բայազետցի Եգոր Վարդանեան Մարկոսեանցը։ Ենթադրում են, որ վիրաւորվել են երեք հոգի ևս, որոնք փախել, անյայտացել են։

(«Баку»)

Երևան, 21 յունվարի.—Երէկ, երեկոյեան, սպանվեց գիմնազիայի մաթեմատիկայի ուսուցիչ Մէլիքեանը, երբ մանկավարժական խորհրդի նիստից տուն վերադառնալով քաշում էր դռան զանգը։ Հանգուցեալը մաթեմատիկայի ուսուցիչ էր սեպտեմբեր ամսից. խիստ էր, պահանջող և յաճախ ենթարկվում էր ժամանակաւոր բոյկոտի։ Մարդասպանները կրակել են 8 անգամ և անյայտացել են։ Նոյն հանգամանքներում երկու տարի առաջ սպանվեց մաթեմատիկայի ուսուցիչ Կրանկօն։ Սպանութիւնը չը պարզվեց։

(«Հ. Գ.»)

Կ.-Պօլիս, 21 յունվարի.—Դեկտեմբերի 26-ին Ջիդդայում ցուցակագրել են ժանտախտի 17 մահացու դէպք։

(«Հ. Գ.»)

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Կիրակի, յունվարի 21-ին, կայացաւ Թիֆլիսի երկրորդ քաղաքամասի առաջադէմ ընտրողների նախընտրական խորհրդակցութիւնը։

Խորհրդակցութիւնը մշակեց պատուիրակների ցուցակ, որի մէջ մտան հետևեալ երեք անձինք՝ Ա. Քալանթար, Պ. Դոլուխանեան և Ե. Տուրկեվիչ։

Այդ ցուցակը պէտք է առաջարկվի առաջադէմ ընտրողներին, իբրև յանձնարարական ցուցակ։

Յունվարի 21-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Թիֆլիսի քաղաքային վարչութեան գործավարութեան դահլիճում, Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար իշխան Չերքէզովի նախագահութեամբ կայացել է Թիֆլիսի գաւառի քաղաքային ընտրողների համագումարը՝ մէկ պատուիրակ ընտրելու Թիֆլիսի նահանգական ընտ[illegible] Ցերեկվայ ժամի 1-ի մօտերը, 451 ընտրողներից ներկայ եղող 72 հոգին իբրև թեկնածուներ առաջարկել են Մէկակիշվիլին (52 սպիտակ և 20 սև), Սանչուլաձէին (17 սպիտակ և 54 սև) և Խալաթօվին (17 սպ. և 58 սև)։ Ձայների մեծամասնութեամբ ընտրված է յայտարարվել առաջինը։

Այն անձինք, որոնք չեն ստացել ընտրողական թերթիկները ոստիկանական պաշտօնեաների միջոցով, կարող են անձամբ ստանալ քաղաքային վարչութեան մէջ, նախապէս անձի հաստատման վկայաթուղթը ներկայացնելով։

Փոխարքան հրահանգով պատուիրել է նահանգապետներին հսկել, որ ընտրողների անգրագիտութեան դէպքում նրանց խնդիրքով թեկնածուների ցուցակում գրվող պատուիրակների ազգանունները գրեն վստահելի անձնաւորութիւններ։

Բաթումի հիւանդանոցի նախկին կառավարիչ Կարլ Չխէիձէն, որ պատկանում է սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան, իր թեկնածութիւնն է դրել Պետական Դումայի անդամութեան համար Քութայիսի նահանգի կողմից։

Բագւում ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը իբրև թեկնածուներ Պետական Դումայի համար մատնանշել է Բագուի գաւառի կողմից հետևեալ անձնաւորութիւններին Բալախանու կողմից—ինժեներ Եւգէնի Կօնս. Պետրովին, Բիբի-Հէյբաթի կողմից—ինժեներ Բախշի Գէորգ Բէգ-նազար-Իզզաշէվին, Սպիտակ քաղաքի կողմից—ինժեներ Արտաշէս Իվ. Մինասեանցին։

Թիֆլիսի Թուրքերը ուրբաթ, ամսիս 19-ին, ժամի 11-ին հաւաքվել էին իրանց Թաղի VI քաղաքամասի մզկիթում, զբաղվելու ընտրական ագիտացիայով։ Առաջին ճառախօսը յորդոր կարդաց հանդիսականներին չը մեկուսանալ, այլ միւս կուսակցութիւնների գործունէութեան և ծրագրի հետ ծանօթանալով միանալ մէկին կամ միւսին։ Միանալ, որովհետև այն կռիւը, որ մղվում է ներկայ ռեժիմի դէմ, իրանց էլ կռիւն է, քանի որ այդ ռեժիմից հաւասարաչափ և աւելի տուժում են մահմեդականները, Թուրքերը։

Երկրորդ ճառախօսը՝ մի սօցիալ-դեմօկրատ, մի եռանդուն բանախօսութեամբ պատկերացնում է գոյութիւն ունեցող այլևայլ կուսակցութիւնների էութիւնն ու դէմքը և ջերմագին հրաւէր է կարդում միանալ սօցիալ-դեմօկրատներին, ձայն տալ նրանց թեկնածուներին, որովհետև սօցիալ-դեմօկրատիան է միայն պրօլետարիատի և աշխատաւոր մասսաների շահերի իսկական պաշտպանը։

Այնուհետև գծելով Պետական Դումայի, իբրև քաղաքական գիտակցութեան հասունութեան գործօնի՝ նշանակութիւնը, և այն դերը, որ նա խաղալու է Ռուսաստանի ժողովուրդների կեանքում, և հէնց այդ պատճառով էլ ռուս բիւրօկրատիայի յամառ ջանքերը՝ ստեղծելու հլու, կամակատար Դումա, ժողովականներին հրաւիրում է օգտվել իրանց ընտրական իրաւունքից և այնտեղ ուղարկել միայն սօցիալ-դեմօկրատ պատգամաւոր։

Ժողովը վճռում է միաբերան ձայն տալ սօցիալ-դեմօկրատներին։

Ժողովը լսելով, որ երկու Թուրքեր՝ Դաշնակցութեան համար գնում են Թուրք տնատէրերի քուէն, որոշեց դրանցից մէկին, Մաշադի Ալի Կուլիեվին բոյկոտի ենթարկել, որովհետև նրա մասին ծանր մեղադրանքներ կային։

7-րդ Թաղամասի ոստիկանութեան պրիստաւը Թիֆլիսի քաղաքային վարչութեան կից գտնվող ստատիստիքական բիւրօյին ուղարկել է 1170-ը ծրարներ ընտրողական թերթիկներով, որոնք ընտրողների բացակայութեան և հասցէների անորոշութեան պատճառով տեղ չեն հասել։

Յունվարի 24-ին, երեկոյեան ժամը 5-ին, քաղաքային մսի խանութների շինութեան մէջ կը կայանայ I քաղաքամասի ընտրողների նախընտրական ժողով լիազօրներ ընտրելու համար։

Մօտ օրերս կայացել է ռուսական սօցիալ-դեմօկրատական բանւորական կուսակցութեան և հայոց սօց.-դեմօկր. կուսակցութեան տեղական մարմինների ներկայացուցիչների ժողով՝ միմեանց մէջ բլօկ կազմելու հարցը քննելու համար։ Մտքերի կարճ փոխանակութիւնից յետոյ հայ կազմակերպութեան ներկայացուցիչները դժգոհ հարցի դրված ձևից, հեռացել են ժողովից։ Բլօկի հարցը մնացել է առկախ։

Փօթիից հեռագրում են, որ Սէնաքի գաւառի հողատէրերի և գիւղացիական հասարակութիւնների ընտրութիւններին ան[illegible]

Հին-Նախիջևանից հեռագրում են, որ մահմեդականների ներկայացուցիչների նախընտրական ժողովին իբրև թեկնածու առաջարկվել է «Շարքի-Ռուս» Թուրքաց նախկին լրագրի խմբագիր Շախտախտինսկին, որը բացարձակապէս յայտնել է, որ ինքը պատկանում է ձախակողմեան կուսակցութիւններին։ Շախտախտինսկու օգտին եռանդով ագիտացիա են մղում տեղական և Երևանի խաները։

Բաթումի նահանգապետը հեռագրել է Փոխարքային, որ գիւղացիների լիազօրների ընտրութիւնները, ստորին Աջարիայի և Կենդրելսկի գաւառամասերի Թաղային համագումարներում յունվարի 12-ին չեն կայացել ձիւների խոշոր կոյտերից հաղորդակցութեան բացակայութեան պատճառով։ Տեղեկութիւն չը կայ նաև վերին Աջարիայի գաւառամասի գիւղացիների Թաղական համագումարների մասին։ Նահանգապետը կասկած է յայտնում, թէ մի գուցէ այդ ժողովները կայացած չը լինեն գիւղերի մէջ հաղորդակցութիւն չը լինելու պատճառով։

Նովօրոսիյսկում, դէպօյին կից վերանորոգիչ արհեստանոցում ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեցող 45 հոգուց եկել են 22-ը, որոնք լիազօր են ընտրել բանւորական աշխատաւոր կուսակցութեան անդամ ուղղափառ Պիվօվարովին։

Զաքաթալայի վիճակի կառավարիչը հեռագրով յայտնել է Փոխարքային, որ ընտրողական մասնաժողովը, յունվարի 16-ին նշանակած հողատէրերի համագումարը չը կայացած է համարել, ընտրողների մի մասին չը ծանուցանելու պատճառով, և երկրորդ համագումարը նշանակել է յունվարի 21-ին։ Ի նկատի առնելով այս հանգամանքը, հողատէր-ընտրողների ընդհանուր համագումարը յետաձգած է յունվարի 25-ին։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

ՄԱԼՄԻԺ, 20 յունվարի: Կադէտները անօգուտ ջանքեր են անում ագիտացիա մղել իրանց օգտին: Շատերը հիասթափվել են նրանց ծրագրից:

ՄՕԳԻԼԷՎ, 20 յունվարի: Պետական և հասարակական հիմնարկութիւնների ծառայողների բազմամարդ ժողովում թեկնածուներ առաջարկվեցին հոկտեմբերականներից: Կադէտները ջանքեր գործ դրին խանգարել ընտրութիւնը, սակայն անօգուտ: Նրանց թեկնածուները հազիւ ստացան երկու տասնեակ ձայներ:

ԲԷԼՕՍՏՕԿ, 20 յունվարի: Թշնամի կուսակցութիւնները մինչև օրս չեն հաշտվել: Կադէտների խումբը, որ եռանդով ագիտացիա էր մղում ամբողջ ժամանակ, ագիտացիան դադարեցրեց: Ընտրութիւնները կը կայանան յունվարի 21-ին: Բոլոր շանսերը աջակողմեանների և սիօնիստների կողմն և :

ՁԷՄԼԵԱՆՍԿ, 20 յունվարի: Երէկ կայացաւ նախընտրական ժողով: Իբրև պատուիրակներ մատնանշվեցին չափաւորականներից: Սահմանադիր-ռամկավարների թեկնածուները աջողութիւն չունեցան:

ՊԻՆՍԿ, 20 յունվարի: Կայացան ռուս, լեհ և հրէայ ընտրողների նախընտրական մի շարք ժողովներ: Վերջինների մէջից ռուս մարդիկ և լեհերը բլոկ են կազմել:

ՎԻՏԵԲՍԿ, 20 յունվարի: Հրէաների քաղաքային ընտրողական կօմիտէտը, բլոկ կազմելով հրէական և բանւորական կօմիտէտների հետ, մերժեց համաձայնութիւն կապել բունտի հետ և թեկնածուների ցուցակը մտցնել իբրև պատուիրակի՝ մէկ առաջադիմական ռուսի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունվարի: Մինչև այսօր ստացված հեռագրերի համաձայն շրջանային ժողովների, բանւորների և մանր հողատէրերի ընտրութիւններին ընտրվող անձերից առայժմ 11378-ը լիազօրներ են, որոնցից 3222 միապետականներ են, 5380-ը չափաւորականներ (օրինակարգի կուսակցութեան անձինք, հոկտեմբերականներ, կենտրոնականներ և այլ սահմանադիր-միապետականներ, որոնք կանգնած են խաղաղ վերանորոգչականներից աւելի աջ): Մնացած լիազօրների թւից, որոնց մէջ կան անկուսակցականներ և առաջադիմականներ, 326-ը կադէտներ են: Մանր հողատէրերի 3836 լիազօրներից 1781-ը քահանաներ են:

ՄԻՆՍԿ, 21 յունվ.: Հողատէրերի նահանգական ընտրողական կօմիտէտը վճռել է գաւառական նստաշրջաններում հաւասարացնել ռուս և լեհ պատուիրակների թիւը և մի քանի գաւառներում բլոկ կազմել մանր հողատէրերի հետ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունվ.: Քաղաքային ընտրողների համագումարներին իբրև պատուիրակներ ընտրվել են. Օրլում—օրինակարգի կուսակցութեան անդամները, Վոլխօվում—խաղաղ վերանորոգչականները, Կրոմում—կադէտները, Սէվսկում—հոկտեմբերականները, Լեվնայում—խաղաղ վերանորոգչականները, Մըցէնսկում — սահմանադիր - ռամկավարները, Տրուբչէվսկում—հոկտեմբրականները, Մալօ-օրխանգէլսկում—ձախակողմեան սահմանադիր-ռամկավարները, Բրգայում—երկու միապետական, Վալկում, Վօլմարում և Պէրնովում—ձախակողմեանները:

ՄՕՍԿՎԱ, 21 յունվ.: Հոկտեմբերականների կենտրոնական կօմիտէտը հաստատել է Պետական Դումայի թեկնածուների հետևեալ ցուցակը. Մոսկվայի կողմից—Ալէքսանդր Գուչկով, Վլադիմիր Դմիրիէ, Ֆեօդոր Պլէվակօ, կոմս Կօմպրօվսկի, Գրիգորի Կրէստօվնիկօվ, Ալէքսէյ Բէլկին, Եգոր Նօլտէն, Կարլ Լինդէման:

ՎԻԼՆԱ, 21 յունվ.: Ռուս ընտրողների ժողովը որոշել է, միւս ազգութիւնների հետ բլոկ չը կազմելով հանդերձ, ընտրութիւններին մասնակցել ինքնուրոյն կերպով և բոլոր թաղամասերում բաժանել իրանց թեկնածուների անունացուցակը: Ապա որոշել է միջնորդել, որ Պետ. Դ. կամ Խորհ. համար ռուսների կողմից յատուկ պատգամաւոր ընտրվի: Ընտրողական կօմիտէտը այդ մտքով թռուցիկներ է ցրել ազգաբնակութեան մէջ.

ՍՄՕԼԷՆՍԿ, 21 յունվարի: Կայացաւ մէջ-չանական ժողով՝ քննելու թէ ընտրութիւններին ո՛ր կուսակցութեանը յարել: Ձայների ճնշող մեծամասնութեամբ որոշվեց մասնակցել հոկտեմբերական թեկնածուներին: Սահմանադիր-ռամկավարների հետևորդները աջողութիւն չունեցան:

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Յունվարի 15-ին

Նպաստամատոյց Յանձնաժողովի պատգամաւորութեան Պետերբուրգ գալու գլխաւոր նպատակն այն էր, որ դիմումներ անէ հայոց եկեղեցական խորհրդին և իշխան Ս. Աբամէլիք-Լազարեւին: Դժբախտաբար, վերջինս բացակայ է Պետերբուրգից և այժմ ապրում է Իտալիայում: Պատգամաւորութիւնը ստիպված տեսաւ իրան գրաւոր դիմումն անել նրան:

Իսկ եկեղեցական խորհուրդը, դեռ պատգամաւորութեան, վաղուց առաջ, ինքնաբերաբար, որոշում է իր կողմից նոյնպէս օգնութեան հասնել հայ տառապեալ ժողովրդին: Պատգամաւորութիւնը, իմանալով խորհրդի այդ դիտաւորութիւնը, խնդրեց ձևակերպել և որոշել օգնութեան չափը: Երէկ, կիրակի, յունվարի 14-ին կայացաւ խորհրդի արտակարգ նիստը, որին հրաւիրված էին և պատգամաւորները: Այդտեղ վերջինները զեկուցին իրանց առաքելութեան նպատակը, տեղեկութիւններ հաղորդեցին Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովի գործունէութեան, ունեցած կարիքների մասին և խնդրեցին, որ Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհուրդը չը զլանայ իր օգնութիւնը: Խորհուրդը, ի նկատի ունենալով գործի բոլոր հանգամանքները, իր միջոցները և իր կանոնադրութիւնը, որի սահմաններում ստիպված է նա գործել, որոշեց՝ 1907 թւի իր բիւջէտով նախատեսնված ամբողջ մնացորդը, մօտ 25,000 րուբլի յատկացնել Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովին: Միևնոյն ժամանակ պարզվեց, որ եկեղեցական խորհուրդը անցեալ 1906 թ. ընթացքում տուել է նոյնպէս յօգուտ հայ տառապեալների 38,000 րուբլի, որից մօտ 20,000 րուբլին Կենտրոնական Յանձնաժողովի միջոցով:

Ուրեմն Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը 1907 թ. ընթացքում կը տայ Յանձնաժողովին 25,000 ր.:

Պատգամաւորութիւնը հարկ համարեց բանակցել և նորերս Պետերբուրգում կազմված կանանց մասնաժողովի հետ: Յայտնվեց, որ այդ մասնաժողովը մինչև այսօր հաւաքել է միայն 4400 րուբլի, որից 2000 րուբլին տուել է հայ կապիտալիստ Մ. Արամեանցը: Մասնաժողովը պատրաստակամութիւն յայտնեց իր հաւաքած և հաւաքելի գումարները տալ նոյնպէս Կենտրոնական Յանձնաժողովին կամ նրա ճիւղ՝ Բագուի մասնաժողովին:

Պատգամաւորութիւնը գտնելով, որ պ. Մ. Արամեանցը կարող էր աւելի տալ յօգուտ հայ սովեալների, քան 2000 րուբլին, որոշեց նոր դիմումն անել նրան և յոյս կայ, որ նա մի աչքի ընկնող գումար կը նուիրէ:

Վաղը պատգամաւորութիւնը մեկնում է այստեղից նորից Մոսկվա, որտեղից նա կը շրջէ միւս քաղաքները:

Հ. Ա.

ՍՈՎԻ ԴԷՄ

Դորիս, 14 յունվարի

Մարդկային կեանքի անմխիթարելի չարիքներից մէկն էլ սովն է. սովը գութ չունի. նա սեռի, հասակի, կրօնի, կոչման և դասակարգի ոչ մի խտրութիւն չէ դնում և տեղը հասած ժամանակը անխղճօրէն լափում ամայացնում է շէն գիւղեր, գաւառներ և մինչև անգամ ամբողջ նահանգներ:

Սակայն այդ գիւղերը, գաւառները և նահանգները մինչև այժմ (չնչին բացառութեամբ) որոշ դրական քայլ չեն արել սովի դէմ, միջոցներ չեն ձեռք առել քաջաբար հանդիպելու և կռւելու նրա դէմ, թէկուզ նըրանից տասնեակ անգամ ենթարկված լինեն խոշոր աւերածութեան:

Եւ այդպէս մեր ժողովուրդը չարիքից՝ մի կերպ թօթափվելուց յետոյ, նա այլևս չէ մտածում նոյն չարիքի մասին, իսկ եթէ գիւղացիների հացաբերքը սովորականից աւելի առատ է լինում, ճ՛հ, այն ժամանակ սովի մասին միանգամայն աւելորդ են համարում մտածել, նոյնիսկ անցեալում նրանից ահագին վնաս կրածները:

—Էհ, ամեն տարի հօ սով չի լինելու, նա էլ մի պատահմունք էր էլի, անցաւ գնաց:

Այսպէս ինքն իրան դատելով, գիւղացին շռայլաբար փչացնում է հացաբերքի համարեա կէսը. այն է ցորենով զանազան անպէտք, թաց մրգեղէններ է առնում, ամեն տեսակի չարչիներից, սոսկալի գներով կիսով փչացած իրեր է վերցնում և նրա փոխարէն չնչին վարձատրութեամբ ցորեն տալիս, կամ հէնց գիւղի խանութից ցորենով, առանց չափ ու կշռի, աչքի դարպասով (կեօզ վարավուրդի), զանազան իրեր գնում, այն էլ երեխաների միջոցով հայլն հայլն:

Ահա, ինչ ճանապարհով և, բոլորովին աննկատելի կերպով և համարեա ի զուր տեղը փչանում է գիւղացու մի ամբողջ տարւայ քրտնատանջ վաստակի մեծ մասը:

Այս բոլորի վրա եթէ աւելացնենք և մի քանի գիւղական վատ և շատ հին սովորութիւններ, օրինակ՝ քելեխը, 7 օրով հարսանիքը, կալաձուսը և այլն, կը տեսնենք, որ իսկապէս գիւղացու հացի թշնամիների թիւը տասնեակների է հասնում:

Ցաւը նրանումն է, որ այդ թշնամիները, բարեկամ ձևանալով գիւղացիներին, ծծում, դատարկում են վերջինների շտեմարանները և միևնոյն ժամանակ մեծ յարգանքների արժանանում նրանց կողմից:

Իսկ մեր խեղճ ու կրակ հայ գիւղացիք չեն ուզում սթափվել լետարգիական խոր քնից, դեն շպրտել իրանց վաղեմի վատ սովորութիւնները, սահմանափակել շռայլաբար հացի վատնումը և այդ բոլորի փոխարէն, աւելի դիւրին ու ապահով ապրելու համար, բանալ մի մի [illegible] և հիմնել իւրաքանչիւր գիւղում մի մի գիւղական հացի շտեմարան:

Շտեմարանի և սպառողական խանութի օգտակարութիւնը գիւղացիներին պարզ հասկանալի կը լինի միմիայն այն ժամանակ, երբ կենդանի օրինակներով կաջողվի ապացուցել այդ:

Վերջինիս նպատակով, ինչպէս լսում ենք, մի խումբ ինտելիգենտ մարդկանց մէջ արդէն միտք է յղացել գիւղական շտեմարաններ հիմնել. որա համար նրանք դիմել են Բագուի Կուլտուրական Ընկերութեանը, խնդրելով, որ վերջինիս նուիրած ցորենը տրվի գիւղացիներին՝ նոյն գիւղի շտեմարանի անունից:

Ուրանալ չէ կարելի, որ սա շատ համակրելի ձեռնարկութիւն է, սակայն այստեղ պէտք է յիշել ժողովրդական առածը. «Երկաթը տաք տաք կը ծեծեն»:

Համոզվենք, որ եթէ գործի գլխին բարեխիղճ մարդիկ կը լինեն կանգնած, եթէ այդ գործը կրիայի քայլերով առաջ ընթանայ, իսկ մինչև այդ քաղցած գիւղացու փորը կշտանայ և դաշտումը հաց երևայ, այն ժամանակ նա իսպառ մոռանալով սովը, այլ ևս կարիք չի զգայ շտեմարանի:

Շտեմարանի հիմնելը զարմանալի է թւում գիւղացիներից շատերին, գուցէ նրա համար, որ այդ անիրագործելի են համարում, բայց թող նրանք հաւատան, որ եթէ մի քիչ չափաւորեն, վերև յիշած ճանապարհով ցորենի վատնումը և դրա փոխարէն ոյժերը ներածին չափ աւելացրած ցորենը յանձնեն տեղական շտեմարանին, առնելով նրա վարչութիւնից հարկաւոր անդորրագրեր, այն ժամանակ երկու երեք տարուց յետոյ շտեմարանը կունենայ աչքի ընկնող քանակութեամբ ցորեն և փառաւոր կերպով կապահէ գիւղացիներին սովից:

Իսկ եթէ բախտը ժպտայ և գիւղը մի քանի տարի առատ բերք ունենայ, ճ՛հ այն ժամանակ նա այնպէս զինված կը լինի սովի դէմ, որ վերջինս բնաւ չի համարձակվի գիւղին մօտենալ:

Ուրեմն հիմնենք շտեմարանները, որոնցով և զինված կը լինենք անգութ սովի դէմ:

Յովհաննէս Գրիգորեանց

ՄԱՄՈՒԼ

Այն ժամանակ, երբ պրոգրեսիվ մամուլի մէջ տեօրեթիկական դատողութիւններ ու վէճեր են տեղի ունենում առհասարակ բլօկների ու համաձայնութիւնների մասին, «մեծամասնական» սօցիալ-դեմօկրատները իրականութեան մէջ միացած աջակողմեանների հետ կռիւ են մղում ժողովրդական ազատութեան կուսակցութեան դէմ. Նկատելով այդ փաստը «Новь» լրագիրը աւելացնում է.

Կեանքի մէջ ակամայից իրագործվում է «մալինինի» անունական բլոկը «ինտելիգենցիայի դէմ»: Կուսակցական կատաղի կռւի մէջ մոռացութեան են տրվում անկասկած ընդհանուր քաղաքական շահեր, երբ, կուսակցութեամբ խայթելու համար, ձախակողմեան օպպօզիցիոնները բարեհաճ մասնակցութիւն են ունենում հոկտեմբերեան չարախինդ հոգեհանգստին ռուսաց առաջին պարլամենտի համար:

Ծաքաղալուս մեծամասնականները իբրև պատասխան կրկնում են, որ «կառավարութեան դէմ պատերազմելու նպատակը արդէն հնացել է» (Լունաչարսկու խօսքերն են), իսկ այժմ անհրաժեշտ է «կադետական վտանգի» առաջն առնել:

Նրանք աւելի շատ են ատում կադետներին, քան թէ սիրում են Ռուսաստանը:

Թող ուրեմն նրանք յիշեն, որ ընդհանուր ազատագրութեան մեծ բանակի ռազմիկներին և կուսակցական անհամբերողութեան բռունցքամարտոնների համար անշահ պատմութիւնը չի գտնիլ ոչ միատեսակ գնահատութիւն և տարբեր յիշողութիւն:

*

Հեռագրական գործակալութեան տուած տեղեկութիւններին եթէ նայելու լինենք, պէտք է ընդունենք, որ Ռուսաստանի գիւղական միջավայրի մէջ կատարված համայնական լիազօրների ընտրութիւնները տուել են միանգամայն մինիստրութեան ցանկութեան համապատասխան արդիւնք, որ յաղթող են հանդիսացել խաղաղ վերածնութիւնից դէպի աջ գտնվող կուսակցութիւնները, այսինքն աջակողմեան և չափաւոր տարրեր, մինչդեռ պաշտօնական գործակալութիւնը իսկապէս միայն ցանկանում է ընտրութիւնները նպաստաւոր ներկայացնել կառավարութեան համար և ազդել ապագայ ընտրութիւնների վրա:

Մինչդեռ այդ տեղեկութիւնները միտումնաւոր են և չեն համապատասխանում իրականութեանը:

Այդ առիթով «Р. В.» լրագիրը նկատում է.

Գործակալութիւնը իր տեղեկութիւնները գլխաւորապէս քաղում է ոստիկանական աղբիւրներից, որոնք ընդհանրապէս լինում են անյուսալի, մանաւանդ ներկայ դէպքում: Իշխանութեան ներկայացուցիչների առաջ գիւղացիները աւելի քիչ անկեղծ կը լինեն իրանց համոզմունքները որոշելու մէջ և այդ պատճառով մի ուրեդը, յամենայն դէպս ոստիկանութիւնը չէ կարող ստոյգ տեղեկութիւններ ունենալ լիազօրների աշխարհահայեացքների մասին: Միևնոյն ժամանակ ադմինիստրացիան շահագրգիռ է, որպէսզի «ամեն ինչ նրա մօտ անփորձ» լինի, և, շատ բնական է, որ նա ասում է թէ իր գաւառում օպպօզիցիա չը կայ:

Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ գործակալութեան և լրագրական թղթակիցների տուած տեղեկութիւնների մէջ ահագին տարբերութիւններ կան: Վերջիններս որոշակի յայտնում են, որ աջողութիւն են ունեցել «պրոգրեսիստներն» ու «օպպօզիցիոն» տարրերը:

*

Լեհական մամուլը դատափետում է իրանց սեփականատէրերի բռնած դիրքը դէպի դեմօկրատական գաղափարների տարածումը: «Przeglod Spoleczy» լրագիրը գրում է.

Ինչքան մեր սեփականատէրերի դասակարգը վախենում է դեմօկրատական գաղափարների ընդարձակ տարածումից Ռուսաստանում և կառավարող շրջանակների վրա նըրանց ունեցած ազդեցութիւնից, կարելի է շատ լաւ հասկանալ այդ բանը երկու լօկաուտների համեմատութիւնից —մէկը Լեհական թագաւորութեան մէջ, իսկ միւսը՝ Ֆրանսիայում: Լօձի գործարանատէրերը զգում են իրանց հովանաւորող տեղական իշխանութիւնների թևերը, որոնք կազմալուծում են դաշնակցութիւնները, արտաքսում են անգործներին և ուղարկում են նրանց [illegible] կալանաւորութիւններ են կատարում. յիշենք միայն այն միջոցները, որ գործադրվել են ի նպաստ Լօձի գործարանատէրերի:

Ֆրանսիայի Ֆուրմեր քաղաքում, որտեղ նոյնպէս լօկաուտ է յայտարարված բանւորներին, քաղաքային վարչութիւնը թոյլ է տալիս անգործներին անտառից ձրի վառելափայտ վերցնել, իսկ պալատը մեծամասնութեամբ 326 ձայնով ընդունում է առաջարկութեան անյետաձգելիութիւնը, որով պահանջվում է 100,000 ֆրանկ կրեդիտ անգործների համար և պարլամենտական մասնաժողով նշանակել լօկաուտի պատճառները քննելու համար:

«Այդ քննութիւնը—ասել է պալատում հասարակական աշխատանքների մինիստր Վիվիանին,—ցոյց կը տայ ծանր և անարդար կերպով տառապող ազգաբնակութեանը, որ պալատը զբաղված է նրանց կարիքների հոգածութեամբ»:

Անշուշտ ֆրան-մասոնների Ֆրանսիան դէպի անկում է գնում,—ասում է հեգնանքով հեղինակը,—մինչդեռ մեզ մօտ դէպի բաղդաւորութիւն, ուրիշ տեսակ, բոլորովին ուրիշ տեսակ…

*

Հայ դեմօկրատական կուսակցութեան երևան գալը արտասահմանում հրատարակվող ոչ կուսակցական հայ թերթերի կողմից լաւ ընդունելութիւն գտաւ: Մենք պարբերաբար կը տանք այն կարծիքներն ու հայեացքները, որ արտայայտել են նրանք մեր կեանքի դըժբաղդ իրականութիւնից անհրաժեշտաբար ծնունդ առնող այդ քաղաքական կուսակցութեան մասին:

Գահիրէում հրատարակվող «Լուսաբեր» թերթը ասում է.

Ա՛լ բացայայտ ճշմարտութիւն մըն է, որ մենք Թիւրքիոյ Հայերս Ռուսիոյ Հայոցմէն [illegible] պաշտելու վրայ ենք. պատճառներուն վրա ծանրանալ չենք ուզեր: Հիմակ անդին Ռուսիոյ Հայերն ալ իրենց դառնադառն փորձառութեամբը կը տեսնեն թէ իրենցմէ մեզի «փրկելու ազատարար» եկողները ինչեր են եղեր: Եղելութիւնները այս էջերուն մէջ անգամ մը ևս յիշեցնելու պէտք մը չենք զգար:

Եւ Ռուսիոյ Հայերը շուտով պիտի անդրադառնան, երբ իրենց Ռամկավար Կուսակցութիւնը եթէ անդին «արդարացնէ այն յոյսերը, որոնք դրվում են նրա վրայ» թէ մենք Արևմտեան Հայերս, որպիսի համակրալից ընդունելութիւն պիտի գտնէ ու փոխադարձաբար, որքան պիտի նպաստէ դէպի Ռուսիոյ Հայերը մեր վերադարձին:

Ինչ կըսեն թող ըսեն, Թիւրքիոյ հպատակ Հայաստանին ապագան Ռուսիոյ կեանքէն կախում ունի: Ինչ անուն որ ալ տալու ըլլանք այդ ապագային —գերիշխանութիւն, տիրապետութիւն, քաղաքական ազդեցութիւն, ինչ ուզենք ըսենք, միշտ, պարզօրէն խօսելով, գործերնիս Ռուսիոյ հետ պիտի ըլլայ, ուստի բաղդաւորութիւն մը համարելու ենք, երբ վերջապէս Անդրկովկաս կը բարձրանայ համախմբում մը, որ լըջմիտ է ու բարոյականութեան վրայ գաղափար ունի:

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ

Կիրակի, յունվարի 21-ին, Թիֆլիսի հասարակական գրադարանում տեղի ունեցաւ Կովկասեան Հնագիտական ընկերութեան նիստը, Լ. Լօպատինսկու նախագահութեամբ:

Զեկուցանողը Ե. Տակայշվիլին էր: Նա նկարագրեց մանրամասնօրէն Օլթիի շրջանում գտնվող Բանայի տաճարի աւերակները և ցոյց տուեց լուսանկարները: Բանայի տաճարը մեծ նմանութիւն ունի Վաղարշապատի Զուարթնոց և Անիի Գագկի տաճարների հետ: Տակայշվիլին ամենահինը համարում է Վաղարշապատինը, յետոյ Բանայինը և յետոյ Գագկինը: Նա պնդում է միևնոյն ժամանակ, որ Վաղարշապատի տաճարից առաջ շինված է եղել մի նոյնպիսի տաճար Իշխանում և որ նրա կառուցանողը եղել է հէնց նոյն Ներսէս շինողը: Տակայշվիլին համարում է այդ բոլոր տաճարների աղբիւրը բիւզանդական ճարտարապետութիւնը և գտնում է, որ գերմանական գիտնական Ստրժիգովսկու հայեացքները վիճելի են:

Ա. Նազրօվ առհասարակ կասկածով է վերաբերվում դէպի հայկական և վրացական ոճերը, տաճարների կառուցման մէջ:

Յ. Մանանդեան յայտնում է, որ Ստրժիգովսկու հայեացքները պատճառաբանված են և նրան հերքելու համար կարևոր են աւելի լուրջ առարկութիւններ:

Ա. Քալանթար պատմում է Զուարթնոց տաճարի և նրա շուրջ յայտնագործած աւերակների մասին: Խօսելով հայկական և վրացական ոճի մասին, նա ընդգծում է, որ դեռ նիւթ քիչ կայ ճիշտ որոշելու տեղական և արտաքին ազդեցութիւնների բնաւորութիւնը և թւում է ասորական, Միջագետքի, Փոքր-Ասիայի, պարսկական, բիւզանդական և տեղական ազդեցութիւնները:

Ժողովին ներկայ էին 30 անձ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ

I

Նախընտրական ներկայ պայքարի ժամանակ մեզանում գործում են մի շարք կուսակցութիւններ, բայց կատաղաբար իրար դէմ կռիւ են մղում երկու խոշոր կուսակցութիւններ, մի կողմում՝ սօցիալ-դեմօկրատները, իսկ միւս կողմում՝ դաշնակցականները:

Անցեալ անգամ իմ «Ընտրական Բարքեր» վերնագրով յօդուածում, ես առաջ էի բերել այն մերկացումները, որ անում են սօցիալ-դեմօկրատները (Հոսանքից) դաշնակցականների նախընտրական սխրագործութիւններից, աւելացնելով նրա վրա իմ դիտողութիւնը: Այժմ էլ անհրաժեշտ ենք համարում առաջ բերել այն մերկացումները, որ անում են դաշնակցականները սօցիալ - դեմօկրատների գործունէութեան մասին «Ժամանակի» №№ 14 և 15-ի էջերում:

Ահաւասիկ.

№ 14.—Սրետենսկի փողոցում մի սօց.-դեմօկրատ տնատէր Հայկ անունով, մտնում է իր տանը ապրող մի դաշնակցականի բնակարանը և վերցնելով ընտրողական ծրարը, սօց.-դեմ. թեկնածուների անուններն է գրում ստիպմամբ:

—Էլիզաբէտինսկիյ փողոցում մի սօց.-դեմ. Մ…օվ խաբելով բնակարանատէրերից շատերին, վերցնում է նրանց թերթիկները, իբր թէ սխալներն ուղղելու և ապա վերադարձնելու, բայց չէ վերադարձնում. իսկ երբ մի տնատէր, Դաւիթ Մարտիրոսեան, իր 4 կենողների հետ դիմում է նրան և պահանջում, նա մերժում է տալ ասելով, «у меня больше конвертовъ нѣтъ»…

—Հինգերորդ քաղաքամասում սօցիալ-դեմօկրատները վերջին օրերս մտն են գալիս տնէտուն և իրանց ձևացնելով քաղաքային վարչութեան կողմից ուղարկված մարդիկ, զանազան հարց ու փորձեր են անում և առաջարկում են ձայն տալ միայն սօց.-դեմօկրատներին:

№ 15.—Կուբինսկայա, Եղիզաւետինսկայա և Շեմախինսկայա փողոցներում մեր դաշնակցական ընկերները պատահել են ինչ որ սօց.- դեմօկրատների՝ Թանդել և Դաթիկօ, որոնք իրենց ներկայացնելով որպէս Առիւծ Աւագի զինւորներ, պահանջում են մարդկանցից ծրարները և յայտնում, որ իրենք յանձնելու են Հ. Յ. Դաշնակցութեանը:

Այդ սուտ կեղծիքը բացւելուց յետոյ, քաղաքացիները զայրոյթով բողոքում են և ծրարները յետ պահանջում:

Սօց.-դեմօկրատները ստիպւած են լինում մի քանիսին վերադարձնել ծրարները:

V-րորդ քաղաքամասում Սինօդալնի փողոցում, № 4 տնում մտնում են սօցիալ-դեմօկրատներից մի քանիսը և Սիմէօն Դիղզաբաքովից վերցնում են ծրարը հանդերձ բիւլլետէններով և հեռանում՝ ասելով՝ յետոյ կը բերենք և մինչև այժմս չեն բերել:

Այդպէս ուրեմն երկուսն էլ մերկացնում են իրար:

Արդարութիւնը պահանջում է, սակայն, խոստովանել, որ յանուն ժողովրդի շահերի ու ազատագրութեան այս անգամ ազդանշանը տուեցին «սօցիալիստ» դաշնակցականները, և շարունակեցին դեմօկրատները, իսկ մէջտեղ տուժողը, բռնութեան զոհն ու շահագործվողը եղաւ ընտրող ժողովուրդը:

Այն միջոցները, որոնց անխտիր կերպով դիմում են ընտրողական պայքարում այդ տեսակ գործիչները, միանգամայն դատապարտելի են ու զզուելի:

Չը կայ աւելի մեծ ոճիր, աւելի աններելի յանցանք քան քաղաքացու և ընտրողի ազատ կամքի ու իրաւունքի յափշտակումը, բռնաբարումը: Դա այն միևնոյն ոճիրն է, որի դէմ ծառացել են ժողովրդի ազատագրութեան անձնուէր ոյժերը:

Ամօթ այն գործողներին, որ շեղվում են հէնց իրանց նախագծած ազնիւ ու գաղափարական ճանապարհից, որ խլում ու շահագործում են ժողովրդի ձայնը իրանց կուսակցական դիտումների համար, որ ժողովրդին ինտրտացնում ու ընտելացնում են անբարոյական գործելակերպի. «Նպատակը արդարացնում է միջոցը»:

II

Այդ կոչման վրա են կանգնած մեր «սօցիալիստներն» էլ, «յեղափոխականներն» էլ. Ինչ կարող ենք անել, ընտրվելու ցաւն ու ղեկավարելու փափագն, է որ սայթքեցնում է նրանց: Իսկ ինչ անի ժողովուրդը, այդ դեռ չը կազմակերպված, անգիտակ ու դիւրահաւատ մասսան. ինչ անեն ընտրողները. քաշ գան նրանց ետևից, որպէսզի վաղն էլ ոչխարի հոտ անւանեն, որպէսզի վաղն էլ վտանգեն նրանց իրանց անտակտ ու հակական գործելակերպով:

Ո՛չ, այդ չը պէտք է թոյլ տան ընտրողները:

Այն ձայնը, այն քուէն, որ ընտրողները տալու են նրանց, վստահութեան ու իրաւունքի քուէն է և պէտք է տան այն գործողներին որոնք ընդունակ են գործ կատարելու Դումայում, որոնք այդ վստահութիւնը կարող են գործադրել մեծ զգուշութեամբ ու խնայողութեամբ, որոնք չեն շեղվում գաղափարական մաքուր ճանապարհից, արատաւորում են ասպարէզը, անարժան կատաստրոֆաներ ստեղծում:

Ձեր այդ քուէից շատ բան է կախված, Նախ և առաջ ցոյց տուեցէք, որ դատապարտում էք այդ կեղծումների ու բռնութիւնների գործելակերպը, ով և լինի նրա հեղինակը:

Զրկելով նրանց վստահութեան քուէից, դուք ցոյց տուած կը լինէք, որ կանգնած էք ձեր կոչման բարձրութեան վրա, որ ձեր ազատ կամքի ու իրաւունքի իսկական տէրն էք:

Թող ուրեմն երևան գայ հասարակական գիտակցութիւնը, կարծիքն ու դատաստանը:

III

«Ժամանակի» վարիչները Թուխակի նման շարունակում են իրանց սովորական երգը. «մատնութիւն է և ամենաստորին մատնութիւն»: Բայց իրանց այդ ձանձրալի կրկնութեան միջոցին ընկնում են ամենաքստմնելի պրօվօկացիայի մէջ: «Ժամանակը» ասում է:

Ո՞վ կարող է օգտվել «Մշակի» աշխատակցի այնքան մանրակրկիտ ցուցմունքներից, թէ այս ինչ տան մէջ հաւաքւում ու գործում են այս ինչ գաղտնի կուսակցութեան պատկանող անձինք, ո՞վ կարող է, ասում ենք, օգտւել այդ ցուցմունքներից, եթէ ոչ…

Եւ շարունակում է.

Ամբողջ յօդուածը առաջ բերելուց յետոյ էլ չէր վերանալ այն փաստը, որ Լ. Դանիէլեանը սպիտակի վրա սևով արձանագրել է յեղափոխական կուսակցութեան անունը, նրա ժողովատեղի փողոցը և տան համարը»:

Ահա թէ ինչպիսի պրօվօկացիայի էք դուք ընդունակ, ահա ինչպիսի միջոցներով էք դուք ուզում ազդել ամբոխի վրա: Սակայն չարաչար սխալվում էք, եթէ ընթերցողներին այդչափ միամիտ էք կարծում. ձեր Թուխակային կոնչիւնները կորցրել են իրանց հըմայքը:

Ցոյց տուէք գոնէ, որ ես այդպիսի ակնարկներ արել եմ,—չէք կարող:

Հետևապէս և ձեր անբարեխղճութիւնը չափ ու սահման չունի: Ես չէի կարող ասել, որ «այս ինչ տան մէջ հաւաքվում ու գործում են այս ինչ գաղտնի կուսակցութեան պատկանող անձինք». դա կը լինէր անհեթեթութիւն, որովհետև ոստիկաններն էլ այն ժամանակ ձեր գաղտնի կուսակցութեան պէտք է պատկանէին:

Մինչդեռ դուք ինքնաբաւական էքստազի մէջ բացագանչում էք.

Ո՞վ կարող է, ասում ենք, օգտւել այդ ցուցմունքներից, եթէ ոչ…

Այո, դուք ճիգում էք ասել. եթէ ոչ… ոստիկանութիւնը:

Ոչ, միամիտ եղէք, եթէ ոչ.-ից յետոյ ես կը դնեմ. եթէ ոչ՝ «ընտրող ժողովուրդը»:

Այո, ընտրող ժողովուրդը, ահա թէ ով պէտք է օգտւի իմ ցուցմունքներից:

Իմ ցուցմունքներին կարօտութիւն չունի ոստիկանութիւնը և ոչ էլ նրանից վախենալու դուք պատճառ ունիք, որովհետև նա ձեզ հետ միասին էր նստած «յեղափոխական» նստարանի վրա, Վօզնեսենսկայա փողոցում, նա ձեր գործակալների հետ V քաղաքամասում թերթիկներ էր տարածում, նա մեղսակից էր ձեր «սխրագործութիւններին», իսկ դուք՝ մեղսակից՝ ժողովրդի, ազատ կամքի, ու իրաւունքի բռնաբարութեան. ժողովրդական քուէի դէմ ձեր լարած դաւադրութիւնն էր պատճառը որ ինձ դրդեց նախազգուշացնել ժողովրդին: Գուցէ այդ նախազգուշացումը մատնութիւն է ձեր ու ձեր դաշնակցի համար, բայց ոչ ժողովրդի:

Ձեր լօգիկայի համաձայն, դուք էլ, երբ մերկացնում էք սօցիալ-դեմօկրատներին, «Ինչեր են անում սօցիալ-դեմօկրատները» վերնագրով ձեր յօդուածում, որտեղ բերում էք յայտնի տնատէրերի անուններ, յիշելով փողոցները, մատնում էք սօցիալ-դեմօկրատներին, որոնք անպայման կարող են տուժել:

Այդպիսի անհեթեթութիւններ առհասարակ արտասանում են նրանք, որոնք անսպասելի կերպով բռնված են յանցանքի տեղում: Ի՞նչ մօրալ և ինչ բարեխղճութիւն սպասել այդպիսիներից:

Խոստովանեցէք և լռեցէք:

Ձեր այդ դաւերն ու խարդաւանանքներն են որ այսօր դրված են հասարակական անաչառ դատաստանի առաջ:

Լ. Դանիէլեան

ԳԻՒՂԱԿԱՆԻ ՑԱՒԵՐԻՑ

I

Դորիս, դեկտ. 28-ին

«Մշակ»-ի № 274-ում, այս վերնագրի տակ, ես համառօտ կերպով շեշտել էի այն հանգամանքների վրա, որոնք արգելք են հանդիսանում գիւղական դպրոցների վերաբացմանը. այսօր էլ նոյնն եմ կրկնում և գուցէ դեռ կարիք կը լինի շատ անգամ կրկնելու, որ ունեւորները, որոնց երեխաները քաղաքներումն են սովորում և երեխայ չունեցողները գիւղում դպրոցի կարիք չեն զգում, և դրա համար է, գլխաւորապէս, որ մեր գիւղական դպրոցների վերաբացման գործը ահագին խոչընդոտների է հանդիպում:

Չէ կարելի ուրանալ այն փաստը, որ գիւղի հարուստը կամ որդի չունի, կամ եղածը, տեղական տէրտէրի մօտ սևն ու սպիտակը ջոկելուց յետոյ, ուրիշների աշխատանքով ապրող վաշխառու հօր փէշակն է սովորում. շատ քիչ է պատահում, երբ սրանք միջին կամ բարձր կրթութիւն են ստանում:

Վաշխառու և անզգամ հարուստների թիւը մի քանիսի հասնելով և ողորմած փողի զօրութեամբ, իրանց բարեկամներով գիւղի նշանաւոր ու ազդեցիկ մասը կազմելով, պարզ է, որ մեծ արգելք կը հանդիսանան այն ամենին, ինչոր իրանց համար ցանկալի և ձեռնտու չէ:

Իսկ ինչու սրանց համար ցանկալի չէ ունենալ ուսումնարան,—երևի կը հարցնէ ընթերցողը:

Այդ հարցը երեք գլխաւոր պատասխան ունի: Ա) որպէս զի աւելորդ ծախքի տակ չընկնի վաշխառուն, բ) որպէս զի ուսուցչի ներկայութիւնը չը խանգարի նրան ազատ դեր կատարել գիւղում, գ) որպէսզի գիւղացիք գրագիտութիւն չը սովորեն, այլ ընդհակառակը տգէտ մնալով, աշխատածը միշտ կուրօրէն մտցնեն վաշխառուի գրպանը, իսկ վերջինս, քուսպը կերած եզան նման, փորն ու վիզը հաստացնելով, աղքատ գրացու հետ վիճելիս՝ սպառնալիքներ կարդայ. «Հեռացիր այստեղից, եթէ չես ուզում գլուխդ հարիւրանոցով պատռեմ»:

Սակայն այդ բոլորը տեսնելուց ինչ են մըտածում ողորմելի գիւղացիք.—Ոչինչ, Աստուած կանչելով, օրեր են մթնցնում և խաբուսիկ յոյսերով կերակրվում:

Այո, խաբուսիկ, բառի բուն իմաստով. խաբուսիկ նրա համար, որ ասացին—ուրախացէք հայեր դպրոցները վերադարձրել են, իսկ մենք չենք կարողանում օգտվել, ասացին. Գրասիրաց ընկերութիւնը դպրոցներ է հիմնում—այդ էլ չեղաւ. ասացին ցեցերը գլուխ չը պիտի բարձրացնեն, այժմ դարձեալ երկրի տէրը նրանք են. ասացին կենտրոնական Ժողովը էջմիածնում ծրագիր է մշակում, այդ էլ կիսատ մնաց:

Բայց մի՞թէ կենտրոնական Ժողովի ծրագիրը ընդմիշտ կիսատ պիտի մնայ. ոչ, դպրոցների կարիքը շատ մեծ է, նա պիտի վերջանայ:

Անշուշտ դպրոցական գործը լայն ծրագրով պիտի կազմակերպվի և ամուր հիմքերի վրա դրվի, որովհետև նա միայն կարող է փրկել ժողովրդին ամեն մի պատահարից, տալով նրան անհրաժեշտ գիտելիքները:

Բայց աւա՜ղ, երբ պիտի գայ այդ ցանկալի օրը, թշուառ ժողովուրդ:

Արդեօք, լոյս ու արև կը տեսնե՞ս դու. քո օրում, թէ խորտակված յոյսերով պիտի քաշ տաս քո չարքաշ կեանքը, սև, դարդոտ բաղդը:

II

«Մշակի» ընթերցողներին յայտնի է Քարահունջի գլխին եկածը, ինչպէս պ. Ա. Սաղանդարեան, նոյնպէս և ես ժամանակին համառօտ կերպով նկարագրել ենք քարահունջեցիների դրութիւնը:

Սակայն մինչև այսօր էլ այդ դժբաղդ գիւղացիների ձայնը ոչ մի տեղ ոչ ոքի կողմից արձագանք չը գտաւ:

Արձագանք չը գտաւ ոչ միայն օտար գիւղացիների, քաղաքացիների կողմից, այլև իւրայինների կողմից:

Բայց որովհետև մարդու խիղճը հանգիստ է լինում միայն այն ժամանակ, երբ նա ճըշտութեամբ կատարում է իր վրա դրած պարտականութիւնը, քարահունջեցիք էլ մեղաւոր չը լինելով, կատարեցին իրանց վրա դրած ծանր պարտականութիւնը, մինչև անգամ այն ժամանակ, երբ նրանց ձայնը լսելի չէր լինում ոչ ոքին:

Այո, պարտականութիւնն էր, որ ստիպում էր, առանց այն էլ քամված, ուժասպառ եղած ժողովրդին ամբողջ 16 օր ենթարկվել սարսափելի ծանր էկզեկուցիայի:

Նա թողեց տուն, տեղ, եղած-չեղած և իր ընտանեկան պատիւը ազատելու համար, ապաստանեց գիւղերում:

Այդտեղից էլ ապրելու անյարմարութիւնները մի կողմից, ցուրտ ու անձրևային եղանակները միւս կողմից, հանգիստ չէին թողնում թշուառ գիւղացիներին և ահա հիւանդութիւնները սկսվեցին, առաջ եկաւ բծաւոր տիֆը, երևի էկզեկուցիայի պակասը լրացնելու. արդէն եղան մի քանի մահվան դէպքեր:

Կօզակները հրաման ստացան հեռանալ գիւղից, բայց արդէն այն ժամանակ, երբ գիւղում այլ ևս հաւի կուտ էլ չէր մնացել. ցորեն, գարի, հաճար, կորեկ, ձմեռվայ բանջարեղեններ և այլն իսպառ վերջացել էին:

Գիւղերում ապաստանածները նորից սկսեցին հաւաքվել և արտասուքները աչքերին դռնէ դուռն ընկնել, ապրելու յարմարութիւն ստեղծելու:

Ահա այդ իսկ ժամանակ գիւղում հարց է ծագում իմանալ էկզեկուցիայի պատճառով իրանց կրած զրկանքի քանակութիւնը. հաշւում են 12,000 րուբլուց աւելի: Եւ այդ բոլորը մի թուրք աւազակի համար, և այդ բոլորը մի անպատկառ մարդու համար, և այդ բոլորը նրա համար, որ քարահունջեցիք թուրք-հայկական անմիտ կոտորածի ժամանակ, ձեռնպահ են մնացել և անմասն ապրել են սարի լանջում, և որ գլխաւորն է նրա համար, որ նրանք ոչ մի մեղք չունեն այդ գործում:

Եարմբ, մարդիկ ինչ հաշիւ են տալիս իրանց, երբ տեսնում են աչքերի առաջ գիւղը կործանվում է անմեղ տեղը, կամ գուցէ ընդհանուրի մեղքի համար. ինչու այդ ընդհանուրը երես էր դարձրել, ինչու ոչնչով չէին ուզում օգնել. չէ՞ որ, 100—120 տնից բաղկացած մի գիւղ չէ կարող դիմանալ այդ սոսկալի փոսին, կամ դիցուք կը դիմանայ—ինչու համար, իր ո՞ր մեղքի համար:

Ո՛չ, ես կարծում եմ ամեն մի ազնիւ, շիտակ մարդ պարտաւոր է ինքը իր դատաւորը լինել և իր արածների համար իրանից հաշիւ պահանջել, իսկ երբ վերջինս տեսնում էր, որ իր մի սխալ քայլի համար, ամբողջ հասարակութիւնն է տուժում, այն էլ տասնեակ հազարներով, անպայման պարտաւոր է թէ իր սխալը ուղղել և թէ վնասված հասարակութեանը տալ որոշ բաւարարութիւն, այլապէս Քարահունջի հասարակութիւնը, ասում եմ, միանգամայն անկարող է տանել, այդ չը տեսնված չարիքը. մանաւանդ այս տարում, երբ մի կողմից բնութիւնը, միւս կողմից կառավարութիւնը, երրորդ կողմից թուրք-հայկական կոտորածը և չորրորդից կեանքի այլ այլ պատահարները ուժեղ, սեղմիչ մեքենայի տակ են դրել խեղճ գիւղացիներին:

Յովհաննէս Գրիգորեանց

Յ. Գ. Նամակս ծրարելիս՝ Ա. մասի ոստիկանը մի քանի կօզակներով գնաց Շինուհայր գիւղը, նոյն գիւղի տանուտէր Հ. Շրբենեանցի սպանութեան պատճառով. սպանութիւնը կատարված է ամսիս 28-ին երեկոյեան պահուն, Գորիսից 3—4 վերստ հեռաւորութեան վրա, երբ նա վերադառնում է եղել իրանց գիւղը:

Հէնց որ «Շաքարուլու» կոչված անտառից դուրս է գալիս թէ չէ, անյայտ մարդիկ գնդակահարում են թէ տանուտէրին և թէ իր ձիուն:

Մանրամասնութիւնները միւս անգամ:

Նոյնը

ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԿԱՐՍՈՒՄ

Այսօր, ամսիս 18 ին, կայացաւ երկրորդ բազմամարդ ընտրողների ժողով հաշտարար դատարանում: Հաշտարար դատաւորից թոյլտուութիւն ստանալուց յետոյ, ամբիոն բարձրացան իրար ետևից պ. Յովսէփ Աթաբէկեանց, հայր Բովչիկ, երկու ռուս բժիշկներ, մի երիտասարդ ինժեներ և մի երկար դէմքով համակրելի հայ երիտասարդ: Վերջինս ինչ ասաց՝ ես չը հասկացայ, չը գիտեմ ինքը հասկացա՞ւ: Բայց խօմ խօսեց. այդ էլ բաւական է: Առաջին ատենաբանները շատ գեղեցիկ բացատրեցին երկրի կարիքները, ներկայացրին ամբողջ Ռուսաստանի դրութիւնը, հրապարակ հանեցին ներկայ կառավարութեան և հպատակների միմեանց հետ ունեցած լարված յարաբերութիւնը, կոտորածները, ավատանքները, աւազակութիւնը և առհասարակ ամեն տեսակ չարագործութիւններ, որոնց վրա երկրորդ Դուման պէտք է ուշադրութիւն դարձնէ: Բացատրեցին ընտրողների և ընտրվողների պարտականութիւնները, և եզրակացրին, որ ընտրվողը պէտք է ունենայ զուտ մարդասիրական լայն հայեացք, ծանօթ պիտի լինի երկրի կարիքների հետ և գնացողը չը պիտի միայն զբաղվի իր վիճակի հարցերով, այլ պիտի մնայ իր պաշտօնակիցների հետ և բոլորը միասին ընդհանուր ոյժով պիտի պահանջեն Ռուսաստանի բարեկարգութիւնները:

Ամսիս 16-ին գրած նամակի մէջ յիշել էի, որ ընտրողները Դիոգինէսի լապտերով ընտրելի են որոնում, և չեն գտնում: Բանից դուրս է գալիս, որ ես չարաչար սխալվել եմ, ընդհակառակը մեզանում ընտրվողները ընտրողներից շատ են: Բաւական է, որ Ալեքսանն էլ իր թեկնածութիւնը դրել է: Այս՝ քաղաքային դպրոցի նախկին աշակերտներից մէկը, որ ոչնչով յայտնի չէ Կարսի հասարակութեան, որ ոչ մի հասարակական գործ չի կատարել, բայց այսօր ցանկութիւն է յայտնել ընտրվելու: Բայց, ասացէք խնդրեմ, ո՞վ է աւելի յանցաւոր. Ալեքսանը, որ համարձակվում է խցկվել ընտրութեան մէջ, թէ նրա խնամիները, քաւոր սանահէրները և սրտակից ընկերները, որոնք ուզում են իրանց բարեկամի խաթրը շահել. էլ ինչու ենք տրտնջում թէ մարդ չունենք. եթէ Ալեքսանը իր թեկնածութիւնը դնում է, Զեպուրենին գրագիր Մաթոսը ինչու չը պիտի դնէ: Այդպիսի երիտասարդներ մեր քաղաքում շատ կան. ում որ հարկաւոր է կուղարկենք: Ինչու հեռու գնանք. տողերիս գրողը դրանցից ոչնչով պակաս չէ. բոյս նրանցից երկար, թէև խոստովանեմ, շալիկս կարճ է: Բարեկամներս նրանցից շատ:

Հասարակութեան ուշադրութիւնը կենտրոնացած է երկու անձնաւորութեան վրա, պ. Յովսէփ Աթաբէկեանց և հայր Բովչիկ: Ինչպէս երևում է, սրանցից մէկը կընտրվի. աւելի հաւանական է, որ Աթաբէկեանցը ընտրվի: Վաղը 19-ին, դարձեալ ժողով կայ. հետևանքի մասին կը գրեմ:

Արամ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵԼՈՒ ԱՌԱՋ

Անցեալ օրը «Մշակում» շատ ճիշտ էր ասված, թէ դաշնակցականները, յայտնի առակի նման, կեանքի հայելու մէջ իրանց հաւաքական պատկերը ուշադրութեամբ դիտելով՝ սկսել են մի տարօրինակ զզուանք զգալ այն բոլորից, ինչ որ իրանց անխուսափելի այլանդակութիւններն են կազմում: «Ժամանակի» № 8-ում նրանք, յանձին ռուս «պատրիոտների», խայտառակութեան սիւնին էին գամել իրանց սեփական շովինիզմն ու այլանդակ նացիոնալիզմը, իսկ այժմ «Ժամանակի» № 13-ում, նրանք նոյնպէս խայտառակութեան սիւնին են գամում իրանց սեփական՝ մտքերի ու սկզբունքների խառնափնթորութիւնը, իրանց գործելակերպի անորոշութիւնն ու հակասութիւնները և դրանցից առաջացած ներքին պառակտումներն ու բաժան-բաժան լինելը:

Այս անգամ «Ժամանակի» հանճարեղ հրապարակախօսները իրանց ինքնաքննադատութեան համար, իբրև օբեկտ կամ հայելի ընտրել են հնչակեաններին, և այդ ընտրութիւնը, կարելի է ասել, միանգամայն աջողակ է:

Երևի կը յիշեն ընթերցողները մեր այն մի շարք՝ «Պատմական փաստեր և բացատրութիւններ» վերնագրով՝ յօդուածները, որտեղ ժամանակագրական կարգով ցոյց էինք տուել, թէ ինչպէս Դաշնակցութիւնը իր ամբողջ 15 տարվայ գոյութեան ընթացքում քայլ առ քայլ հետևել ու գնացել է գործունէութեան նոյն ճանապարհով, ինչ ճանապարհով որ գնացել էր Հնչակեան կուսակցութիւնը: Պերճախօս փաստերով ցոյց էինք տուել և ապացուցել, որ իրերի ու կեանքի միևնոյն հրամայողական պայմանների շնորհիւ, Դաշնակցութիւնն էլ նոյն ներքին հակասութիւնների մէջ ընկաւ, նոյն ներքին պառակտումներին հանդիպեց և նոյն ձևով անխուսափելիօրէն մի քանի մասերի բաժանվեց, ինչպէս որ պատահել էր Հնչակեան կուսակցութեան հետ տարիներ առաջ:

Այժմ այլևս ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ հրապարակի վրա կան մի քանի տեսակ դաշնակցականներ, ինչպէս կային մի քանի տեսակ հնչակեաններ: Մի՛ կողմ թողնելով այն բոլոր տարրերին, որոնք այս վերջին ամիսների ընթացքում զզուանքով երես դարձրեցին Դաշնակցութիւնից և իրանց վրայից բոլորովին նետեցին այդ անունը, այսօր «դաշնակցական» անունը կրող մէկին հանդիպած անձը, հէնց առաջին խօսքից, ուզում է հասկանալ, թէ արդեօք դիմացինը ո՞ր տեսակի «դաշնակցական» է. «հին», «նոր», թէ «նորագոյն». Այդ կատարեալ փաստ է և անհերքելի իրողութիւն:

Յանուն ընտրողական պայքարի, այդ մարդիկը կանգնել են կեանքի հայելու առաջ և, նրա մէջ միամիտ հասարակութեանը Դաշնակցութեան սեփական պատկերի այլանդակութիւնները մի առ մի ցոյց տալով, մի շատ տարօրինակ զզուանքով աշխատում են հաւատացնել, թէ դա իրանց սեփական պատկերը չէ և թէ հայելու մէջ ցոյց տրված այլանդակութիւնները բոլորովին իրանցը չեն:

Կարդացէք, ընթերցող, «Ժամանակի» № 13-ի առաջնորդողից հետևեալ կտորը և ասացէք, թէ դա արդի Դաշնակցութեան ճիշտ և հարազատ պատկերը չէ՞:

«Հնչակեան կուսակցութի՜ւն»...—Դա վաղեմի ծանօթ անուն է հայ հասարակութեան համար:

«Իբրև ուլթրա-ական թեւականների վերջին կազմակերպած այդ հոսանքը, գլխաւոր նպատակակէտ դնելով տաճկահայկական դատի պաշտպանութիւնը, ճնշւած ու ցաւերի մէջ խեղդւած տաճկահայի բողոքի արտայայտութիւնը, տարիներ շարունակ աշխատում է այդ ուղղութեամբ:

«Սակայն ծրագրի ու գործելակերպի մի շարք թերութիւններ, ղեկավար ոյժերի սխալներ, զեղծումներ ու անձնական հաշիւներ շուտով տարածում են քայքայման թոյնը և երկրի գործերը, ժողովրդի անասելի կացութիւնը մոռացութեան մատնելով, կուսակցութեան ամբողջ եռանդը կենտրոնացնում են այդ զեղծումների ու անձնական մրցումների, բանակռիւների շուրջը:

«Տարիներն անցնում են միմեանց յետևից, բայց հնչակեանները շարունակում են նոյն ընթացքը, այդպիսով աւելի ու աւելի նւազեցնելով իրենց շարքերը և մի կուսակցութիւնից նոր-նոր հատուածներ ստեղծելով—միմեանց դէմ կատաղի կռիւ մղող խմբակներ զանազան անուններով՝ «հին հնչակեաններ», «նոր հնչակեաններ», «վերակազմեալ հնչակեաններ», «հնչակեան սօցիալ-դեմօկրատներ» և այլն:

«Ահա այդպիսի քայքայւած դրութեան մէջ է ներկայանում հնչակեան կուսակցութիւնը վերջին տարիներում և երբ Կովկասում մերթ ընդ մերթ հնչւում է այդ անունը մոռացութեան թանձր քօղի տակից, հայ հասարակութիւնը երկմտելով հարց է տալիս, թէ արդեօք ո՞ր հատուածն է դա, ո՞ր բեկորի ձայնն է բարձրանում»:

Փոխարինեցէք այս ամբողջ պարբերութեան մէջ «Հնչակեան» բառը «Դաշնակցութիւն» բառով և ասացէք, թէ դրա իմաստն ու էութիւնը մազաչափ անգամ կը փոխվի՞: Ո՛վ գիտէ, գուցէ «Ժամանակի» հրապարակախօսները ուզեցել են հնչակեանների անուան տակ անկաշառ քննադատութեան ենթարկել հէնց իրանց «Դաշնակցութիւնը»: Այդ պարագայում նոյն առաջնորդողի հետևեալ պարբերութիւնը ամենայն իրաւամբ կարող է վերաբերվել և «Դաշնակցութեանը»:

«Եւ ահա այդպէս՝ քայքայւած ու բեկորների վերածւած՝ իր էութեամբ ու գործունէութեամբ մեր իրականութեան մէջ ոչ մի րէալ նշանակութիւն չունեցող այդ կուսակցութիւնը (այսինքն՝ Դաշնակցութիւնը) պրօպագանդ է մղում, ճիգեր է թափում ձայներ գրաւելու համար»:

Եւ յիրաւի, ի՞նչ դեր կարող է ունենալ «Դաշնակցութեան» ներկայացուցիչը Պետական Դումայում. ի՞նչ աշխարհահայեացք նա պիտի տանէ իր հետ, ի՞նչ սկզբունքներ նա պիտի պաշտպանէ այնտեղ, քանի որ այդ ամբողջ կուսակցութիւնը միանգամայն զուրկ է որ և է որոշ աշխարհահայեացքից ու պարզ և վճիտ սկզբունքներից: Ինչպէս քանիցս անգամ ասել ու ապացուցել ենք, քանի որ Դաշնակցութեան գործունէութիւնը Տաճկաստանումն էր, նա դեռ էլի «խալանչի փահլեվանի» նման շարունակ հնչակեանների գծած շաւղով էր ընթանում, իսկ այն օրվանից ի վեր, երբ նա իր գործունէութիւնը Կովկաս տեղափոխեց և ուզեց ինքնուրոյն կերպով աշխատել, այդ օրվանից. ասում ենք, նա իր դաֆթարը կորցրեց և մի անկլոնելի տուպիկի մէջ ընկաւ: Այժմ Դաշնակցութեան իւրաքանչիւր հատուածն մի անգամ իր սեփական դաւանանքն ունի, և միթէ անպատկառութիւն չէ՞, այդպիսի խառնափնթոր վիճակի մէջ լինելով հանդերձ, ընտրողական պայքարի մէջ մտնել և հազար ու մի զեղծումներով ջանալ, որ դաշնակցական ընտրվի անպատճառ: Արդեօք նմուշների համար են գնալու այդ Դաշնակցականը Պետ. Դումա:

Էջմիածնի «կենդրոնական» ժողովը համարեա թէ ամբողջապէս դաշնակցականներից էր կազմված, և նրանք այնտեղ փառաւորապէս ցոյց տուեցին իրանց ամբողջ ապիկարութիւնը. միթէ ընտրող հայ հասարակութիւնը կարիք ունի՞ մի երկրորդ անգամ «Դաշնակցութեան» ապիկարութիւնը տեսնելու, որպէսզի այս անգամ էլ այդ կազմակերպութիւնից պատգամաւորներ ընտրի: Եթէ ընտրող հասարակութիւնը մի այդպիսի սխալ գործէ, այդպիսով նա իր սեփական ապիկարութիւնը միայն ցոյց կը տայ...

Խ. Ազատ

ՊԱՏՃԷՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալցխայի երկսեռ ուսումնարանների հոգաբարձուները և ուսուցիչները յունվարի 13-ին առաւօտեան ժամի 11-ին խառը ժողովի հաւաքվելով քննութեան առան Վեհափառի 1906 թ. դեկտեմբերին տուած № 1738 կոնդակը և գտան, որ այդ կոնդակը ժամանակաւոր բնաւորութիւն չունի, որ պարզ երևում է նոյն կոնդակի 8-րդ կէտից, ուր ի միջի այլոց ասված է. «Սահմանք պարտուց նոցա (ուսումնական խորհրդին) պարտին լինել... մշակումն նախագծից դպրոցական կանոնադրութեան և բարեփոխութեան ծրագրի... ընտրութիւն դասագրոց և նպաստումն հրատարակութեան նոցին, զհետ լինել պատրաստելոյ ուսուցիչս ի մանկավարժական գիտելիս, կազմումն և կառավարելն դպրոցական ֆոնդին, գումարումն ուսուցչական ժողովոյ առնուազն մի անգամ յընթացս չորից ամաց»:

1) Մի մարմին, որը պէտք է կանոնադրութիւնները բարեփոխէ, դասագրքեր ընտրէ և հրատարակէ, դպրոցական ֆոնդ կազմէ, մանկավարժական պատրաստութիւն ունեցող ուսուցիչներ պատրաստէ և վերջապէս 4 տարին մի անգամ ուսուցչական ժողով հրաւիրէ, չէ կարող աւելի կարճ գոյութիւն ունենալ քան 4 տարին է, մինչդեռ ուսուցչական համագումարի մշակած կանոնադրութեան 24-րդ յօդուածի համաձայն՝ մշտական ուսումնական խորհուրդը ինքը 4 տարով է ընտրվում:

2) Ինչպէս երևում է նոյն կոնդակի ա. կէտից, Վեհափառը ինքը լիազօր էր առանց արտաքին արգելքների հանդիպելու այդ ընտրութիւնը նոյնիսկ ժամանակաւոր եղած դէպքում դնել աւելի արդար հիմունքների վրա, մինչդեռ այս կոնդակով ընտրելու իրաւունք ստանում են միայն ճեմարանի և Ներսիսեան դպրոցի վարչութիւնները և Թիֆլիսի ծխական դպրոցների աւագ ուսուցիչները, իսկ մնացած թեմական դպրոցները և բոլոր գաւառական դպրոցների վարչութիւնները անարդար և ապօրինի կերպով զրկվում են ձայնի իրաւունքից:

3) Թիֆլիսի թեմի ժողովուրդը ընտրելով Ներսիսեան դպրոցի հոգաբարձուներին տուել է նրանց որոշ լիազօրութիւն միմիայն Ներսիսեան դպրոցի վերաբերմամբ, ուրեմն՝ նրանք թեմական ուսումնական խորհրդի ֆունկցիաները կատարելիս կը լինեն ոչ թէ ընտրովի, այլ նշանակովի մի մարմին, ուրեմն այս դէպքում բռնաբարված կը լինեն ժողովրդի իրաւունքները:

Աչքի առաջ ունենալով այս բոլոր կէտերը, խառը ժողովը որոշեց՝

1) Բուռն բողոք յայտնել Վեհափառի 1906 թ. դեկտ. տուած № 1738 կոնդակի դէմ, պահանջելով անյապաղ միջոցներ ձեռք առնել գործադրութեան մէջ մտցնելու ուսուցչական համաժողովի մշակած կանոնադրութիւնը:

2) Հրաւիրել իրանց պաշտօնակիցներին կազմակերպված միահամուռ ուժերով միջոցներ ձեռք առնել պաշտպանելու ժողովրդի իրաւունքները:

3) Հրատարակել այս արձանագրութեան պատճէնը «Մշակ» և «Ժամանակ» օրաթերթերում, խնդրելով միւս թերթերին արտատպել և վերջապէս

4) Խառը ժողովը յոյս յայտնեց թէ Ներսիսեան դպրոցի և ճեմարանի վարչութիւնները Թիֆլիսի ծխական ուսումնարանների աւագ ուսուցիչների հետ միասին իրանց գործունէութեամբ չեն նպաստի ժողովրդի իրաւունքների բռնաբարելուն և չեն թոյլ տայ, որ մեր ծխական դպրոցները լինեն բաղդի և կամայականութեան խաղալիք և մնան նոյն անկարգ և անորոշ դրութեան մէջ, ինչպէս որ էին յիսուն տարվայ ընթացքում:

Ծանօթ. Այս արձանագրութեան մէջ ջնջված է երկրորդ երեսում «տպագրելու» բառը:

Այս արձանագրութիւնը ընդունվեց միաձայն, բացի առաջին երեսում եղած «այդ կոնդակը ժամանակաւոր բնաւորութիւն չունի» նախադասութիւնից, որին դէմ էին երկու ձայն, երկուսը ձեռնպահ:

Նախագահ ժողովի՝ Ստ. Կարապետեանց

անդամներ՝ Ռուբէն Տէր-Գրիգորեանց, Սիրանոյշ Դինազարեանց, Գէորգ Յովսէփեանց, Նրմինէ Մուրադեանց, Յ. Աբրահամեան, Գ. Չիֆլիկեանց, Հ. Տէր-Գրիգորեան, Կ. Գուլոյեանց, Յ. Սարգսեանց, Հ. Մանկոյեանց, Շողակաթ Գալոյեանց, Դրաստ Տէր-Ասատրեան, Մ. Տէր-Ասատրեանց, Յ. Աղնաւուրեան, Պ. Տէր-Կարապետեանց, Միքայէլ, Ս. Ադամեանց, Ճղմաճեանց, Կ. Գրիգորեանց, Տիգ. Ղանալանեանց, Գ. Իսկէնդէրեանց, Գ. Արաքեանց, Ս. Քարիմեանց, Վ. Աւետիսեանց:

Ժող. քարտուղար Ներսէս Տէր-Գրիգորեանց:

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 20 յունվարի

«Ժամանակ» լրագրի այսօրվան համարում տպված է մի լուր, որում մեղադրում են ինձ: Ուստի այդ խնդրում եմ տեղ տալ մեր այս նամակին: Ո՞ւմ յայտնի չէ, որ վեց ամսից է ի վեր լրագրութեան մէջ և նոյնիսկ անեղ պատանալիքներով շարունակվել է Հ. Յ. Դաշնակցութեան կուսակցական ներքին պայքարը և պառակտումը:

Եւ ո՞ւմ յայտնի չէր, որ այժմ Թիֆլիսում գոյութիւն ունի Դաշնակցութեան ժամանակաւոր Զին. Խորհուրդը, որ նա իր անկախ գործունէութեամբ վարում է գործը այնպէս, ինչպէս որ ընթանում էր Դաշնակցութեան 15 տարվայ անցեալը: Չը նայած դրան արդի դաշնակցական շէֆերը շարունակում են իրանց ափից ցփեց հայհոյանքները այս ու այն անհատի և նոյնիսկ ժամանակաւոր Զին. Խորհրդի հասցէին: Այն օրից, երբ արդի շէֆերը իրանց բարձրութեան գագաթնակէտից վայր էին գլորվում, այդ օրից ընդհանուր ժողովուրդը հիասթափված յետ-յետ էր փախչում Դաշնակցութիւնից. ես էլ մէկն էի նրանցից: Բայց վերջին ժամանակներում երբ կազմվեց Դաշնակցութեան ժամանակաւոր Զին. Խորհուրդը և անմիջապէս ձեռքը առաւ Դաշնակցութեան նախկին ուղղութեան ղեկը, ինչպէս շատերը այնպէս էլ ես թերահաւատութեամբ էի վերաբերվում նրա գործունէութեան. սակայն ամենակարճ ժամանակի ընթացքում ժամանակաւոր Զին. Խորհուրդը իր եռանդուն գործունէութեամբ միանշամայն ապացուցեց, որ նա գտնվում է գաղափարական ամենամաքուր հողի վրա, այն է որ նա բացարձակ կերպով հրապարակ է հանել իր բոլոր ուժը և մարտնչում է այն բոլոր բռնութիւնների դէմ, որոնք յեղափոխական անուան տակ կատարվում են հասարակութեան հասցէին: Խորհրդի գործնական քայլերը այդ ասպարէզում գրաւել են հասարակութեան համակրանքը. ի միջի այլոց և իմ համակրանքը. իսկ ի՞նչ վերաբերում է վաճառականներից ստացված փողերին, ես՝ որքան գիտեմ, ակամայից ոչինչ չէ եղել, ինչ որ է, եղել է կամաւոր և որ ստացողը Խորհրդի կողմից նշանակված ներկայացուցիչն է եղել և որի համար վաճառականները ստացել են նոյն իսկ անդորրագիր: «Ժամանակի» հերոսները ի զուր են պրովակացիա սարքում և ի զուր են ինձանից հաշիւ պահանջում:

Նասիբով

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աղէտեալների օգտին ստացանք. 1, Բէլիկլիւջից—Մարտիրոս Ազատեանի միջոցով ժողոված 50 ր., 2, Բարֆրուշից (Պարսկաստան) տեղական հայ վաճառականների շրջանում ժողոված Ս. Բաղդեանցի միջոցով 132 ր., 3, Լուգանսկից, Մ. Մուրադեանի միջոցով ժողոված 96 ր. 90 կ., 4, Մարիապոլից Կ. Գասպարեանից Իգդիրմաւայի հայ որբերի օգտին 5 ր.:

—

Կիրակի, յունվարի 21-ին, Թիֆլիսի արտիստական թատրոնում տեղի ունեցաւ Զանգեզուրի աղէտեալների օգտին մի երեկոյթ, կոմսուհի Վորոնցովա-Դաշկովայի նախաձեռնութեամբ և ղեկավարութեամբ: Երեկոյթի առաջին մասում կայացաւ կոնցերտ, որից յետոյ սկսեցին պարեր: Կոնցերտին մասնակցեցին կոզակների երգեցիկ խումբը և օպերային երգիչներ: Կոզակների երգածներից ամենից շատ հաւանութիւն գտաւ մալոռոսիական մի երգ: Օպերային երգիչ Մօզեռով արտայայտիչ կերպով երգեց «Իշխան Իգորից» մի կտոր, Զարով սրտագրաւ կերպով «Դուբրովսկու դիմումը իր մօր յիշատակին», երգչուհի Վան-Բրանդ Նուրը և գեղեցիկ կերպով երգեց «Պատրիայի երգը» «Լակմէ» օպերայից: Երաժիշտ Նիկօլաևը գրաւիչ և արտայայտիչ կերպով նուագեց: Ջակուլինեակ կարդաց Չեխովից: Դերասանուհի Բուդկևիչը կարդաց Կ. Ռ. մի ոտանաւոր: Երեկոյթը գրաւել էր մեծ բազմութիւն:

—

Յունվարի 21-ին, ցերեկվայ ժամը 4-ից մինչև երեկոյեան ժամը 10-ը, կայացել է Թիֆլիսի սպասաւորների արհեստակցական միութեան բազմամարդ ժողովը քաղաքային դումայի դահլիճում: Կենդանի վէճից յետոյ նախագահ է ընտրվել Բոնտարէնկօն: Այդ նիստում քննվել է յիշեալ միութեան կանոնադրութեան նախագիծը: Կանոնադրութեան հետ ծանօթանալուց յետոյ, ժողովը ձեռնարկել է վարչութեան անդամների և սրանց համար թեկնածուների, ինչպէս և վերստուգիչ մասնաժողովի անդամների ընտրութեան: Այս արհեստակցական միութիւնը նպատակ ունի առհասարակ բարելաւել Թիֆլիսի սպասաւորների դրութիւնը կարողութեան չափով և նիւթական օգնութիւն մատուցել կարիքաւորներին և ընդհանրապէս օգնութիւն բոլոր կարիք ունեցողներին, այս խօսքի ընդարձակ իմաստով:

—

Մեզ հաղորդում են Քութայիսից, որ յունվարի 20-ին, երեկոյեան ժամը 11-ին, Քութայիսի ճիւղի զօրանոցի վրա յարձակվել են ատրճանակներով զինված 2 չարագործներ և բանուորների բացակայութեան ժամանակ կոտրելով զօրանոցի դռները և 5 արկղներ, որոնցից վերցնելով 35 րուբլի փող, հագուստներ և ատրճանակներ (ոչ արքունական) փախել են անտառը: Չարագործներից մէկին՝ Էստատէ Բարախիձէին բանուորներից մէկը ճանաչել է և ձերբակալել է:

—

Յունվարի 19-ին երեկոյեան Թիֆլիսաբնակ ռուսահպատակ և պարսկահպատակ մահմեդականները խառը ժողով են ունեցել, որտեղ քննութեան նիւթ է դարձել Թիֆլիսում յատկապէս մահմեդականների համար գիշերային ապաստանարան հիմնելու հարցը, որ դրական լուծումն է ստացել և ընդունվել է միաձայն: Ապաստանարանը բանալու և պահպանելու ծախքերը հոգալու են իրանք թուրքերը:

(«Кав. Рѣчь»)

—

Յունվարի 19-ին, երեկոյեան ժամը 11-ին, անյայտ անձի ձեռքով դանակով մէջքից ծանր վիրաւորվում է Թիֆլիս քաղաքացի Արտեմ Միքայէլեանը, որ ապրում է Լազարէվսկի փողոցում, № 46 տան մէջ: Վիրաւորվածը Միքայէլեան հիւանդանոցը տանելիս մեռնում է:

—

Անցեալ տարվայ յուլիս ամսին ձերբակալված և ներկայումս Մետեխի բանտում բանտարկված ուսանող Ա. Ջ. Իոանէսօվը մի սպառնական նամակ է ստացել, որի տակ ստորագրված է «Թիֆլիսի հայրենասէրների ռազմիկ խումբ»: Անանուն հեղինակների խօսքերի համաձայն, սպառնալիքը գործադրվելու է Իոանէսօվի բանտից արձակվելուց յետոյ:

—

Թիֆլիսում կազմակերպվել է սաղմագործների ընկերութիւն, որի կանոնադրութիւնը ներկայացրված է նահանգապետին ի հաստատութիւն:

—

Յունվարի 10-ին կայացել է Ադելխանովի բոլոր գործարանների և արհեստանոցների բանուորների պատգամաւորների անկուսակցական ժողովը. Ժողովին ներկայ են եղել 25 ներկայացուցիչ: Քննվել է տարածված այն լուրը, որ իբր թէ Ադելխանովը մտադիր է արձակել բանուորներից մի քանիսին: Բաւական երկար խորհրդակցութիւնից յետոյ, ժողովը որոշել է. 1) եթէ ճշտվի այդ լուրը, մենք ստիպված կը լինենք պաշտպանել արձակվող ընկերներին և բոլոր ուժերով կաշխատենք ազատել նրանց այդ տեսակ վիճակից. 2) ծայրահեղ դէպքում, եթէ արձակելը անխուսափելի հանդիսանայ, մենք պէտք է հարկադրենք գործարանատիրոջ, որ նա բանուորներին արձակի այն պայմաններով, որոնցով 2—3 ամիս առաջ նա արձակեց 250 բանուորների, այսինքն բոլոր արձակվող բանուորները պէտք է ստանան ամենապակասը երեք ամսվայ ռոճիկները:

(«Саквири»)

—

Դ. Կարգզէլաշվիլին (փակած «Զարի» լրագրի խմբագիր-հրատարակչի եղբայրը) արգելված է ապրել Թիֆլիսում և Թիֆլիսի նահանգում զինուորական դրութեան ամբողջ ժամանակամիջոցում և նա արտաքսվում է էտապով:

—

Գանձակից գրում են, որ յունվարի 17-ի երեկոյեան, ժամանակաւոր գեներալ-նահանգապետ գեն.-մայոր Բուլէրի բնակարանում կայացել է մի խորհրդակցութիւն՝ ներքին գործերի մինիստրութեան բաց թողած 100,000 րուբլին նահանգի սովալլուկ ազգաբնակութեան մէջ բաժանելու հարցը քննելու համար. Խորհրդակցութեան ներկայ են եղել նահանգապետ Ա. Ա. Կալաչևը, փոխ-նահանգապետ Վ. Ն. Բարանովսկին, նահանգական վարչութեան զէմստվային բաժնի կառավարիչ Ա. Կ. Բօգդանօվ և գեներալ-նահանգապետի ժամանակաւոր դիւանապետ Դ. Վ. Անդրէևը: Որոշվում է բաց թողած գումարը բաժանել Զանգեզուրի, Շուշու, Կարեագինի և Ջիվանշիրի գաւառների ազգաբնակութեան մէջ:

—

Թիֆլիսի Հրէական բարեգործական ընկերութեան նախագահ բժիշկ Գ. Ա. Փէզալինին Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետը թոյլատրել է գումարել յիշեալ ընկերութեան ընդհանուր ժողովը յունվարի 28-ին երեկոյեան ժամը $7^{1}/_{2}$-ին, իսկ չը գումարվելու դէպքում—երկրորդ անգամ յունվարի 28-ին, քննելու այն հարցը, որ պէտք է արդեօք դատարանին դիմել և պահանջել այն 15000 ր., որ կտակված է դպրոց կառուցանելու համար և որը Մ. Ե. Ռօզենֆելդը մերժում է տալ:

—

Յունվարի վերջին Թիֆլիսի վրաց բարեգործական ընկերութիւնը սովեալ ազգաբնակութեան համար մի համերգ է կազմակերպել՝ տաղանդաւոր դերասանուհի տ. Ն. Տ. Վան-Բրանդտի և այլ դերասանուհիների մասնակցութեամբ:

—

Յունվարի 18-ին, «Պուշկինսկի նոմերա» կոչվող հիւրանոցում պատահում է հետևեալ անցքը: Երեկոյեան ժամի 7-ի մօտերը երկու անյայտ անձինք մտնում են այն սենեակը, ուր ապրելիս են եղել Պինսկ քաղաքացի, Մինսկի առևտրական բանկի հաւատարմատար Յակոբ Սլուցկին: Մտնողներից մէկը եղել է բարձրահասակ, վերարկուով և սև փափախով, ատրճանակը ձեռքին, իսկ միւսը վերարկուով և սև գլխարկով, ֆիննական դանակը ձեռքին. նրանք պահանջում են տալ 300 րուբլի, սակայն մերժում են ստանում: Այն ժամանակ հրամայելով Սլուցկուն լռել, նրանցից մէկը սկսում է խուզարկութիւն կատարել, որով Սլուցկուց խլում են 16 րուբլի, մի քանի կոպէկներով: Երբ Սլուցկին սկսում է ընդդիմադրել, չարագործներից մէկը բէհրուդով վիրաւորում է նրան կրծքից և աջ ձեռքից, որից յետոյ նրանք դուրս ելնելով հիւրանոցից, փառաւորապէս անյայտանում են:

—

«Մոլլա-Նասր-Էդդին» լրագրի խմբագիր Ջալալ-Մամէդ-Կուլի-Զադէն խնդրամատոյց է եղել նահանգապետին՝ թոյլատրելու բանալ Թիֆլիսում, 6-րդ թաղամասում, մահմեդական ընթերցարան:

—

Յունվարի 14-ին վիրաւորված, Թիֆլիսի երկաթուղային կայարանի կառավարիչ Կրեյսէլէրի դրութիւնը զգալի կերպով դէպի լաւն է գնում:

—

Յունվարի 19-ին, Թիֆլիսի քաղաքային վարչութեան ծառայողների ժողովը որոշել է հաստատել իր միջնորդութիւնը՝ աւելացնել ծառայողների ռոճիկները 20—50%-ով և խնդրել ծառայողներից ոչ ոքի չարձակել:

—

Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատարը տեղեկացրել է Թիֆլիսի քաղաքագլխին, որ ոստիկանապետի դիւանատան կից գեներալ-նահանգապետի հրամանով հաստատված հասցէների սեղանի գոյութիւնը ոչ միայն ցանկալի է համարված, այլ և վերին աստիճանի կարևոր և զինուորական դրութիւնը վերցնելուց յետոյ: Ուստի, Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատարը խնդրում է քաղաքագլխին, որ քաղաքային կանոնների 67-րդ յօդուածի համաձայն, քաղաքային դումայի քննութեան առաջադրվի քաղաքում, զինուորական դրութիւնը վերցնելուց յետոյ, հասցէների սեղան հաստատելու հարցը: Ընդսմին նահանգապետի պաշտօնակատարը յանձնել է ոստիկանապետի հասցէների սեղանի համար մշակած կանոնների նախագիծը, հասցէների սեղանի բլանկների ձևը և տնային մատեանները (домовыя книги):

—

Յունվարի 19-ին Թիֆլիսի մահմեդականները մի բազմամարդ ժողով են ունեցել քննելու այն թուրքերի գործերը, որոնք առաջնորդում էին անյայտ մարդկանց իրանց մէջ և խաբէութեամբ ժողովում մահմեդականներից ընտրողական թերթիկները: Այդ թուրքերից մէկին արդարացրել են, որովհետև հաստատվել է, որ նա խաբված է եղել և չի իմացել թէ ինչ է անում: Իսկ միւսի վերաբերմամբ որոշել են բօյկօտ յայտարարել, այսինքն որ նրա հետ բոլոր թուրքերն էլ չը խօսեն, նրան ոչինչ չը ծախեն և նրանից ոչինչ չառնեն, չը թողնեն մտնելու մզկիթ և, առհասարակ, ամեն ժողովներ, և այլն: Միևնոյն ժողովում որոշել են VI-րդ քաղաքամասում մահմեդականների կողմից առաջարկել լիազօրների համար Մաշադի Մամադ Հասան օղլու և «Մոլլա-Նասր-Էդդին» երգիծաբանական թերթի աշխատակից, յայտնի հրապարակախօս Ֆայիկ Նաման-Զադէի թեկնածութիւնները:

(«Кав. Рѣчь.»)

—

Բագւի քաղաքապետի կարգադրութեամբ «Каспій» լրագրի խմբագիր Թօփչիբաշևին ոստիկանութեան միջոցով յայտնված է, որ նա, Վիբորգի կոչը ստորագրելու պատճառով, գտնվում է քննութեան տակ և չի կարող լինել ոչ թերթի խմբագիր և ոչ էլ քաղաքային վարչութեան ձայնաւոր:

(«Баку»)

—

Յունվարի 17-ին, Բիբի-Էյբաթում վերջացել է Շիբաեվ Նաւթահանքի բանուորների գործադուլը: Բանուորների բոլոր պահանջներին բաւարարութիւն է տրված, նոյնպէս և խոստացված է դրամական պարգև (նագրադ) տալ իւրաքանչիւրին տարեկան իր ռոճկի 3 տոկոսը: Յունվարի 18-ից աշխատանքները վերսկսվել են:

—

«Ռուսնօ» ընկերութեան նաւթահանքում գործադուլը դեռ ևս շարունակվում է: Զուբալովի նաւթահանքում բանուորները ընտրել են մի մասնաժողով, որին և յանձնարարել են մշակել պահանջներ իրանց վարչութեանը ներկայացնելու համար:

(«Баку»)

—

Վարշավայի «Volkzeitung» լրագիրը հաղորդում է, որ Բեռնի համալսարանի ուսանող Ադոլֆ Նայտերը Վարշավայից, որտեղ ապրում են իր ծնողները, հեռագիր է ստացել հետևեալ բովանդակութեամբ. «Մայրդ մեռնում է, անյապաղ արի»: Ուսանող Նայտերը շտապով վերադառնում է Վարշավա, որտեղ գտնում է իր ընտանիքը բոլորովին առողջ: Սակայն քիչ յետոյ գաղտնիքը պարզվում է. հեռագիր ուղարկողները լինում են գաղտնի ոստիկանութեան գործակալները, որոնք շուտով ներս են մտնում և կալանաւորում խեղճ ուսանողին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Անչափահասների ոճրագործութիւնը և փրկութեան դպրոցներ

Մեր ներկայ կեանքը հարուստ է զանազանակերպ սօցիալական հարցերով, որոնցից ամեն մէկը իր աժմէութիւնը ունենալով՝ հարկադրում է հասարակութեան մտածող տարրերին այդ հարցերի լուծումով զբաղվելու: Այդպիսի հասարակական խնդիրների թւին է պատկանում և անչափահասների ոճրագործութեան խնդիրը և նրա դէմ կռւելու հարցը: Եւ իսկապէս այս խնդիրը պակաս կարևորութիւն չունի հասարակական այլ խնդիրների մէջ, որովհետև, ինչպէս թւատները ցոյց են տալիս, վերաճող կուլտուրայի հետ հսկայական չափերի են բարձրանում անչափահասների յանցագործութիւնները, իսկ սա, պարզ է, որ մի սօցիալական մեծ չարիք է, որի չը բուժելը վարակիչ կարող է լինել ժողովրդների նորմալ կեանքի համար:

Ի՞նչ է ցոյց տալիս իրականութիւնը:

Գերմանիան 1882 թւին 30,719 պատանի յանցագործներ է ունեցել, 1896 թւին 44,275 հոգի է եղել. սրանցից անցեալում պատժված են եղել մի անգամ 4849 հոգի, երկու անգամ 1796 հոգի և մինչև 6 անգամ 1675 հոգի, իսկ մնացածները առաջին անգամ են յանցանքի մէջ բռնվել:

Գերմանիայում հարիւր հազար պատանուց (12—20 տարին) յանցագործներ եղել են.

1882	թւին	568	հոգի
1889	»	614	»
1892	»	686	»
1896	»	703	հոգի

Ինչպէս տեսնում էք, մեծ չափերի է հասնում յանցագործ պատանիների թիւը և մշտական աճումի մէջ: Այդ յանցանքները զանազան տեսակ են լինում. գողութիւն, բռնութիւն ուրիշների վրա, անհնազանդութիւն օրէնքների դէմ և այլն և այլն:

Ի հարկէ, այս երևոյթը ունի իր՝ հոգեբանական, տնտեսական և այլ շարժառիթներ, իսկ այդ չարիքի դէմ կռւելու համար նախ անհրաժեշտ է չարիքի արմատները որոնել և լուսաբանել նրա աճման պատճառները, որպէսզի այնուհետև պարզվի թէ ինչ դրական միջոցներ կարելի է ձեռք առնել չարիքը վերջացնելու համար:

Իտալացի յայտնի մարդաբան Լօմբրօզօն ընդունում է, որ կան այնպիսի մարդիկ, որոնք ի ծնէ ոճրագործ են, այսինքն իրանց ծնողներից այնպիսի հոգեկան կարողութիւններ են ժառանգել, որոնք նրանց մղում են դէպի ոճրի իրագործմանը, և այլ կերպ նրանք լինել չեն կարող, և դրանք իսկապէս պատասխանատու չեն իրանց արարքների համար: Ընդունելով անգամ, որ այս թէօրիան ճիշտ լինել կարող է, սակայն սրան չի կարելի ընդհանուր նշանակութիւն տալ և նրանով ամեն ինչ բացատրել: Պատանի յանցագործների մեծագոյն քանակը իսկապէս ընդածին ոճրագործ չէ, ուստի և նրա արարքների շարժառիթները այլ հիմքերից պէտք է բացատրել: Իսկ ընդածին ոճրագործներին հասարակութեան համար անվնաս դարձնելու միակ հնարաւորութիւնը նրանց առանձնացնելու միջոցն է:

Անչափահասների յանցանքների առաջացման մէջ մեծ դեր է խաղում առհասարակ անհատի և այդ գործողութիւնների ժամանակ ունեցած դրութիւնը: Մեծ նշանակութիւն ունի նոյնպէս և անհատի ստացած կրթութեան ձևը և չափը: Շատերը կամքի պատճառականութեան ենթակայ լինելուց ուզում են եզրակացնել, որ անհատը պատասխանատու չէ իր արարքների համար, քանի որ այլ կերպ չէր կարող անել. ճիշտ չէ այդ. իրաւ է, որ մարդու կամքը ենթակայ է կաուզալիտէտի և նրա ամեն մի վճիռը և կամ ամեն մի մտմունքի այլ և այլ գործողութիւնը կապ ունի նախորդից և ազդված է նրանից. ճիշտ է, որ հասարակական և տնտեսական զանազան պատճառներ կարող են դրդիչներ և գուցէ երբեմն գլխաւոր պատճառները լինել կամքի այս կամ այն վճռի կամ գործողութեան, սակայն դրանով դեռ չէ վերանում մարդու պատասխանատուութեան կարողութեան խնդիրը: Նորմալ մարդը ունի հոգեկան այնպիսի կարողութիւններ, որ կարող է բարոյապէս ապրել, կարող է իր արարքները յարմարեցնել հասարակական կեանքում օբեկտիվացած օրէնքների հետ: Մարդը ունի քննադատողական ոգի իր գործողութիւնների վերաբերմամբ և հոգեկան կարողութիւն բարոյական նորմաներով ապրելու համար. նա պատասխանատու է իր արարքների համար հասարակութեան առաջ, որովհետև նա պատասխանատուութեան կարողութեամբ օժտված արարած է: Բայց շատ անգամ սխալ է լինում և հակաբարոյական՝ անհատի բարոյական մաստաբը և թոյլ նրա մէջ քննադատական ոգին, սխալ ճանապարհի վրա նրա ձգտումների ընթացքը, և ահա այս դրութիւնից առաջանում է յանցանքը, բախումն օբեկտիվացած օրէնքների և սուբեկտիվ մտմնութեան գործողութիւնների մէջ:

Միմիայն հոգեբանական հիմքերի վրա չէ բարձրանում յանցանքի գոյութիւնը, այլ նրան կերակրում են և բազմաթիւ արտաքին—տնտեսական-հասարակական պատճառներ: Փաստ է, որ այնտեղ, ուր բնակչութիւնը կուտակված է, օր. քաղաքներում, ոճիրներ և յանցանքներ աւելի մեծ չափերով են կատարվում: Այդտեղ նշանակութիւն ունի հասարակութեան որոշ մասի տնտեսապէս տառապող դրութիւնը, և նոյնպէս ոչ կարևոր տեղ է բռնում քաղաքի կեանքը իր դէպի ոճիրը գրաւող զանազան կողմերով:

Այս չարիքի դէմ կռւելու համար շատ վաղուց և այժմ էլ գործադրում են այն սկզբունքը, թէ անչափահասներին ևս պէտք է պատժել ըստ իրանց արարքների, ի հարկէ որոշ զիջումներով: Սակայն փորձերը ցոյց են տալիս, թէ ինչ սոսկալի նշանակութիւն ունի անչափահասի համար դատաստանական պատիժը և թէ այդ պատիժը արդէն բարոյական մահ է ամեն պատանու համար: Պարզ է թէ նա բանտերում ինչ շրջապատի հետ է գործ ունենում և թէ այդ շրջապատի ազդեցութիւնը ինչպէս անչափահասին դէպի կորստեան անդունդն է տանում: Ուրեմն չարիքի դէմ կռւելու այս մեթօդը դրական հետեւանքների չէ հասնում։

Թողնելով անչափահասների յանցագործութիւնների դէմ կռւելու այլ և այլ դրական միջոցների մասին խօսելը, կը ցանկայի այստեղ բաւականանալ միմիայն երկու հիմնական միջոցների յիշատակութեամբ՝ ժողովրդական և «փրկութեան» դպրոցների։

Պատանիներին յանցանքներից ազատ պահելու համար նախ անհրաժեշտ է բարեփոխել ժողովրդական դպրոցները. պէտք է նոր շունչ, նոր հոգի մտցնել այդ հաստատութիւնների մէջ։ «Գլուխը լցնելու» մեթօդը, որը մեզ մօտ մեծ տեղ է բռնում, պէտք է մոռացութեան տրվի և նրա տեղը պէտք է բռնէ դաստաւանդելու և դաստիարակելու մեթօդը։ Պէտք է երեխաների կամքը, բնաւորութիւնը կրթել. պէտք է երեխաների մէջ արթուն պահվի բարոյական նորմաներով ընթանալու հոգեկան կարողութիւնը։ Յանցանքների պատճառները քննելիս, ասացինք, որ անհատի ունեցած քննադատական ոգին, բարոյական նորմերը իր մէջ իշխող դարձնելու կարողութիւնը մասամբ ձեռք բերովի յատկութիւն է, ուրեմն սրանից եզրակացվում է, որ դպրոցը պէտք է այդ յատկութիւնները պատրաստէ նոր սերնդի մէջ։ Եթէ ժողովրդական դպրոցներում այլ հոգի տիրէր, յանցանքների մեծագոյն քանակը պակասած կը լինէր։

Անչափահասների յանցանքների դէմ կռւելու ամենաուժեղ զէնքը կարող էր լինել մանաւանդ, այսպէս կոչվող, «փրկութեան տներ կամ դպրոցները», որոնք հարիւրներով տարածված են Գերմանիայի զանազան մասերում։

Այս դպրոցների միակ նպատակն է բարոյապէս փչացած և այլասերված երեխաներին կրթել և ուղիղ ճանապարհ բերել։ Ի հարկէ այդ դպրոցներում տիրում է այնպիսի ոգի և կրթութեան ձև, որպիսին ամենից յարմարն է այդպիսի հոգեկանի տէր երեխաների համար։ Բողոքական «փրկութեան դպրոցները» Գերմանիայում.

ՏԵՂԸ	Դպրոցների թիւը	Այդ ձեւի առաջին դպրոցի հիմնարկութեան տարին	Ուսուցիչներ	Ուսուցչուհիներ	Ծառայողների թիւը (աղախինները)	Դաստիարակուողների (երեխաների) թիւը
Անհալդ	4	1842	6	—	4	169
Բադէն	12	1820	23	6	1	652
Բաւերն	36	1699	17	20	21	932
Բրաունշվայգ	2	1852	11	—	8	400
Բրեմէն	2	1846	4	1	110	110
Էլզաս-Լօտարինգիա	7	1825	5	5	6	400
Համբուրգ	7	1833	25	5	24	470
Մեծ հերց. Հեսսէն	5	1847	6	6	7	242
Ամբողջ Պրուսիան	196	1675	398	92	314	6496
Սաքսոնիա	21	1840	21	2	14	516
Վիւրտէնբերգ	21	1820	38	16	18	1219
Եւ այլ ուրիշ բազմաթիւ տեղեր						
Բոլորը	320	1675	575	166	443	14636

Միմիայն այս չէ Գերմանիայում եղած փրկութեան դպրոցների թիւը, այլ կաթոլիկները նոյնպէս մօտ նոյնչափ դպրոցներ ունեն տէրութեան այլ և այլ մասերում։

Եւ այդ բոլոր դպրոցները բաւականին բարերար նշանակութիւն ունեն գերմանական կեանքում և մեծ աջողութեամբ կռւում են սօցիալական այդ մեծ չարիքի, անչափահասների յանցագործութիւնների տարածման դէմ։

Գ. Էդիլեան

ԻՏԱԼԻԱՆ ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

«Մշակի» 8-րդ համարի արտաքին լուրերի բաժնում հաղորդել էինք, որ Իտալիայի արտաքին գործերի մինիստր Տիտօնին իտալական պարլամենտում մի ճառ է արտասանել, որի մէջ, ի միջի այլոց, շօշափել է և՛ մակեդօնական հարցը, որը պատճառ է եղել Թիւրքական մինիստրութեանը՝ դեկտ. 14-ին յատուկ մինիստրական խորհուրդ գումարելու։

Ստորև առաջ ենք բերում յիշեալ ճառի այն մասը, որ վերաբերում է մակեդօնական հարցին.

«Գալով Մակեդօնիային,—շարունակեց իր ճառն արտաքին գործերի մինիստրը,—իտալական շահերն այնտեղ արդէն պաշտպանված են շնորհիւ մեր դաշնակցութիւնների և Ալբանիայում՝ շնորհիւ Վիսկօնտի-Վենօստա-Գօլուխօվսկիի կարգադրութեան։ Մինչև այժմ մենք Աւստրիայի հետ կատարեալ համաձայնութեամբ վարվեցինք մակեդօնական խնդրի վերաբերմամբ և ապագայում էլ նոյնպէս պէտք է վարվենք։ Լուրեր են պտտում, թէ Ալբանիայի վերաբերմամբ կայացած մասնաւոր կարգադրութիւնը բացասական բնաւորութիւն ունի, ուստի ցանկալի է համարվում դրական մի համաձայնութիւն կայացնել։ Դրան ի պատասխան հարկ եմ համարում յայտնել, որ կոմս Գօլուխօվսկիի հետ իմ ունեցած տեսակցութիւնները ոչ թէ հաճոյախօսութիւն էին, այլ դրական, օգտակար և միևնոյն ժամանակ գործնական հետեւանքի են հասցրել մեզ։ Այդ տեսակցութիւնները մեր տեսակէտների մէջև առաջ բերին կատարեալ նոյնութիւն այն իմաստով, որ եթէ statu quo-ն պահպանել անկարելի լինի, այդ դէպքում Իտալիան և Աւստրիան համաձայնվելու են Մակեդօնիային այնպիսի մի ինքնավարութիւն տալու վերաբերմամբ, որ հիմնված լինի Բալկանեան թերակղզու ազգայնութեան սկզբունքի վրա։ Այս ծրագիրն ամեն տեսակէտով էլ դրական է։ Սա միևնոյն ժամանակ անշահախնդիր էլ է, որովհետև Արևելքում իտալական կենսական շահերը հարկադրում են մեզ ամենից առաջ անշահախնդիր լինել։ Ուրեմն ես պարտաւոր եմ մերժել այն խորհուրդը, որ թելադրել են ինձ. ինձ տրված այդ խորհուրդը կայանում է նրանում, որ առաջարկեմ Աւստրիային մակեդօնական հարցը լուծելու համար դիմել հողային բաժանման և առաջխաղացումներ անել, պահանջելով մեզ համար հողային վարձատրութիւններ, չը նայած որ, Բեռլինի դաշնագրի համաձայն, ինչպէս Աւստրիային, նոյնպէս և Իտալիային, գործելու ուրիշ ձև է տրված։ Այդ տեսակ մի վարմունք բացարձակապէս հակառում է այն սկզբունքներին, որոնց պարտական է Իտալիան իր կապակցութիւնը, և ամբողջապէս կարատաւորէ այն քաղաքականութիւնը, որին հետեւում է Իտալիան Արևելքի վերաբերմամբ։ Այն համաձայնութիւնը, որը ներկայումս կապված է Իտալիայի ու Աւստրիայի միջև, ապագայում պէտք է զարգանայ անպատճառ, բայց նրա հիմնական սկզբունքը պէտք է անխախտ պահվի և ոչ մի փոփոխութիւն չը պիտի կրէ։ Այս քաղաքականութիւնը երկու տեսակ օգուտ է տալիս. նախ՝ Բ. Դուռն այդ քաղաքականութեանը սկզբունքով համամիտ է, որովհետև Իտալիայի և Աւստրիայի միջև կապված վերոյիշեալ համաձայնութեամբ ապահովվում է Թիւրքիայի ամբողջութիւնը, և երկրորդ՝ բալկանեան պետութիւններն էլ համակրանքով ու վստահութեամբ են վերաբերվում դէպի մեր այդ քաղաքականութիւնը, որովհետև այս վերջինս ամենից առաջ ազգայնական սկզբունքին է նախապատուութիւն տալիս։ Այս քաղաքականութիւնը, միևնոյն ժամանակ, կատարելապէս համաձայն է Բեռլինի դաշնագիրն ստորագրող միւս պետութիւնների շահերին, պետութիւններ՝ որոնք, չը նայած որ թոյլատրեցին Աւստրիային և Ռուսաստանին գործադրելու Միւրցշտեգում կազմած ծրագիրը, այնուամենայնիւ, հարկ եղած դէպքում, չը հրաժարվեցին բնաւ իրանց ձայնը լսելի դարձնելուց բալկանեան գործերում»։

Տիտօնին ապա յայտնեց, որ Իտալիայի ունեցած յարաբերութիւնները բալկանեան պետութիւնների հետ գերազանց են։ Նրա ասելով, բարենորոգումների արդիւնքը Մակեդօնիայում գոհացուցիչ է, և գովասանքի արժանի է մակեդօնական ոստիկանութեան մէջ ծառայող իտալացի աստիճանաւորների անկաշառ և անաչառ վարմունքը։ «Եթէ կայ մի հանգամանք,—շարունակեց իր ճառը Տիտօնին,—որը մեծամեծ խոչընդոտներ ու դժուարութիւններ է յարուցանում պետութիւնների՝ Մակեդօնիայում խաղաղութիւն ու նորմալ վիճակ ընտեղծելու գործին, այդ էլ այն է, որ այդ երկրում ներկայումս քրիստոնեայ ժողովուրդների միջև բուռն և անագորոյն կռիւ է տեղի ունենում, այն ժողովուրդների՝ որոնց օգտի համար է ձեռնարկված բարենորոգումների գործին. այն սպանութիւններն ու թալանները, որոնք այժմ գործվում են Մակեդօնիայում հրոսակախմբերի կողմից, ամօթ ու նախատինք են քաղաքակրթութեան համար և ահագին վտանգ են սպառնում։ Իտալական կառավարութիւնը պէտք է մասնակցէ այն ազդեցիկ միջոցներին, որոնց դիմելու են պետութիւնները՝ վերջ դնելու համար իրերի այդ անհանդուրժելի վիճակին։ Ռումինօ-յունական թշնամութիւնն աւելի ևս ծանրացնում է դրութիւնը։ Իտալիան պատրաստ է իր բարեացակամ ու անշահախնդիր աջակցութիւնը նուիրելու այդ թշնամութիւնը անհետացնելու համար»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՍԵՐԲԻԱ

Հակակրութիւն թագաւորի դէմ.—Եւրոպական թերթերը հաղորդում են, որ Սերբիան մի նոր թագաւորի կարիք է զգում, որովհետև Պետր Կարագէորգեվիչը շատ ծեր և անկարող անձնաւորութիւն է, հէնց այդ պատճառով էլ օրըստօրէ կորցնում է իր ժողովրդի համակրութիւնը։ Պետր թագաւորը թէև իր նախորդի եղերական մահվան գործում մեղսակից չէ, բայց Միլանին սպանողների ձեռքում ծառայում է որպէս գործիք։ Սերբիայում ներկայումս գոյութիւն ունեն երկու կուսակցութիւն, որոնք իրանց նպատակ են դրել մի նոր թագաւորի ընտրութիւնը։ Այդ կուսակցութիւններից մինն ցանկանում է սերբիական գահը բարձրացնել անգլիական թագաւոր Էդուարդ VII-ի եղբօրը, իսկ միւս կուսակցութիւնը կամենում է սերբիական թագաւոր ընտրել գերմանացի մի պրինցի։ Յիշեալ կուսակցութիւնները, եթէ կարողանան իրանց նպատակին հասնել, ներկայ թագաւորին պիտի խնդրեն առանց բարդութիւններ առաջացնելու թողնել իր պաշտօնը։ Սակայն սերբիացի հայրենասէրները չեն ցանկանում, որ ներկայումս իրանց երկրում մի մեծ տագնապ պայթի, որպիսին կարող է տեղի ունենալ թագաւորը փոխելիս, քանի որ առանց այն էլ Բալկանեան թերակղզում դրութիւնը խաղաղ չէ երևում, իսկ այդպիսի պայմաններում սերբերը պարտաւոր են միանալ, որպէսզի կարողանան պատրաստ լինել ամեն պատահականութեան։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 յունվարի

ՕԴԵՍԱ։ Ձերբակալված են Առևտրական դպրոցի 30 աշակերտները, որոնք կասկածվում են դպրոցը պայթեցնելու մտադրութեան մէջ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Համաձայն Ալէքսէեվսկի գլխաւոր կոմիտէտի նախագահի ամենահպատակ հաշւետւութեան, 1905 թ. յուլիսի 1-ից մինչև 1906 թ. դեկտեմբերի 31-ը կոմիտէտը պատերազմում ընկածների որբերի խնամատարութեան վրա ծախսել է 1905 թ. 61,908 ր. իսկ 1906 թ.—870668 ր., 1907 թւին ծախս նախատեսնվում է 3,125,000 րուբլի։

21 յունվարի

ԳԱՐԻՍԲՈՒՐԳ, (Պէնսիլվանիա)։ Այրվում է շուկան։ Կրակի ճարակ են դարձել շատ շէնքեր, թատրոններ, հիւրանոցներ։ Հրդեհը շարունակվում է։

ԼՎՕՎ։ Վերստին ձերբակալվեցին այն 160 ռուսին ուսանողները, որոնք համալսարանի շինութեան մէջ ցոյց սարքելուց յետոյ ձերբակալվել էին և կրկին ազատվել։ Այդ բանը լրագիրները բացատրում են նրանով, որ իբր համալսարանի ռէկտորը և պրոֆէսորները ռուսիններից սպառնական նամակներ են ստացել։

ԲՐԵՄԷՆ, 19 յունվարի։ Վերաքուէարկութեամբ ազատամիտ Գօրմանը 29,404 ձայնով ռէյխստագի անդամ է ընտրվել։ սօցիալիստ Շմալֆէլը ստացել է 27,690 ձայն։

ՊԱՐԻԶ, 20 յունվարի։ Պրօֆեսոր Մարտէնսը, «Թայմսի» աշխատակիցներից մէկի հետ խօսակցելու ժամանակ, յայտնել է, որ ռուս կառավարութիւնը, մնացած շատ երկիրների կառավարութիւնների, ի թիւս որոնց և Գերմանիայի նման զինաթափման հարցը չէ հասունացած չէ համարում, ուստի և նրա քննութիւնը դրական հետեւանքներ չէ կարող տալ։ Սակայն, այդ այդպէս լինելով հանդերձ, կառավարութիւնը բնաւ իրան իրաւունք չի համարի դուրս հանել կօնֆերէնցիայի քննութիւնից այդ կամ մի այլ որևէ հարց. նա սոսկ աշխատում է հէնց սկզբից պարզել, թէ արդեօք, ինչ ձևով է դրվելու յիշեալ հարցը, որպէսզի այդ, ինչպէս և ուրիշ կէտների վերաբերմամբ հող պատրաստէ և խուսափէ այն անպատեհութիւններից, որոնք թերևս թիւրիմացութիւններ ծնեն և խանգարեն կօնֆերէնցիայի աշխատանքները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունվարի։ Առաւօտեան ժամը 6-ին վախճանվեց յայտնի գիտնական, քիմիայի պրօֆէսոր Դիմիտրի Մենդելէեվ։

ՎԱՐՇԱՎԱ, 20 յունվարի։ Երէկ, Նալենչօվ կայարանում 30 զինված երիտասարդներ յարձակվել են կայարանում հսկող ժանդարմի և Լիւբլինի հաշտարար դատաւորների վրա և երկուսին էլ ատրճանակներով վիրաւորելուց և դրամարկղը ուժանակով պայթեցնելուց յետոյ—անյայտացել են տանելով 542 րուբլի։

ՊՕԼՕՑԿ, 20 յունվարի։ Պարտէզում ատրճանակի հարուածով սպանվեց գաւառական ժանդարմական վարչութեան պետ փոխ-գնդապետ Բէլսկին։ Մարդասպանը ազատ է։

ԼՈՆԴՈՆ, 20 յուն.։ Սըր Ակլանդվօնդը Միլվէրդօյում մի ճառ է արտասանել, որով կշտամբանք է յայտնել լիբերալներին—ծայրահեղ կուսակցութիւնների հետ աւելորդ մերձեցում և մտերմութիւն ցոյց տալու համար. «Անգլիայում սօցիալիստութիւն տարածելը—ասել է նա,—վերին աստիճանի վնասակար է երկրի համար։ Սօցիալիզմը առիթ է տալիս, որ մէկը շահագործէ միւսին»։

ՍՏՕԿՀՕԼՄ, 20 յունվարի։ Կառավարութիւնը ռիկստագ է մտցրել մի օրինագիծ, որ վերաբերում է պարլամենտի և տեղական ինքնավարութեան մարմինների համար մասնանշվող անձերի ընտրութիւններին ընտրողական օրէնքի բարենորոգմանը։ Օրինագծի համաձայն մտցնվելու է ընդհանուր ընտրողական իրաւունք և համեմատական սիստէմ, ստորին պալատի ընտրութիւնների համար։ Վերին պալատի ընտրութիւնները կատարվելու են համեմատական սիստեմի հիման վրա տեղական ինքնավարութեան մարմնի միջոցով։ Վերին պալատի լիազօրութեան ժամանակամիջոցը 9 տարուց իջեցրած է 6-ի։

ՇԱՆԽԱՅ, 20 յունվարի։ Սպասվում է, որ Խանշիկան նշանակվի Մանջուրիայի գեներալ-նահանգապետ։

ԼՕՆԴՕՆ, 20 յունվարի։ «Դէյլի-Տելեգրաֆը» ստացած տեղեկութիւնների համաձայն, Նիւ-Եօրկի մամուլը յուզված կերպով քննում է, թէ գուցէ Ճապօնիայի հետ պատերազմ լինի, թէև զինուորական մինիստրը պնդում է, թէ նման երկիւղ բնաւ չը կայ և իզուր է կարծել։ Մամուլը խորհուրդ է տալիս, որ սպիտակների որդիքը և ճապօնացիների որդիքը միասին ուսանին, որով կարելի է սպասել, որ պատերազմի երկիւղը չքանայ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունվարի։ Յունվարի 19-ին մինիստրների խորհուրդը ձեռնարկեց քննելու արդարադատութեան մինիստրի այն օրինագիծը, որ վերաբերում է տեղական դատարանների բարեփոխմանը։

Այսօր քաղաքս եկաւ ամերիկական նոր դեսպան Ռիդդը։

ՎԱՐՇԱՎԱ, 20 յունվարի։ «Варшавскій Дневникъ»—լրագիրը հետաքրքիր տեղեկութիւն է հաղորդում Վարշավայում տեղի ունեցած աւազակութիւնների մասին։ Այսպէս 1907 թ. եղել են Գմինի հաստատութիւնների և բնակարանների վրա յարձակվելու 54 դէպք, 1905 թ.—93, իսկ 1906 թ.—152։

ՊԵԿԻՆ, 20 յունվարի։ Ճապօնական կառավարութիւնը առաջարկել է չին կառավարութեան Դաշնիում չինական մաքսատուն բանալ Կիաօ-Ջաօում գոյութիւն ունեցող մաքսատան նման։ Հաւանօրէն մաքսատան կից լինելու է ճապօնացի լիազօր անձն։

21 յունվարի

ՑԵՏԻՆԷ, 21 յունվարի։ Իշխան Նիկօլան նոր մինիստրների հետ խօսակցելու ժամանակ ասել է, որ անհրաժեշտ է մահվան պատիժը վերացնել և առաջարկել է արդարադատութեան մինիստրին մշակել այդ հարցը սկուպչինայի համար։

ՊԱՐԻԶ, 21 յունվարի։ Մարտէնսի յայտնած կարծիքի առիթով «Թանը» ասում է, որ ներկայ քաղաքական պայմաններում սպառազինումը սահմանափակելը վտանգաւոր է, որովհետև այդ վերջնականապէս կամրապնդէ մէկ մեծ պետութեան միւսի վերաբերմամբ ունեցած զինուորական գերազանցութիւնը։

ԲԵՌԼԻՆ, 21 յունվարի։ Գիշերվայ ժամը 12-ին յայտնի են դարձել վերաքուէարկութեան 9 հետեւանքներ. պահպանողականները կորցրել են երկու տեղ, շահել են մէկ տեղ, ազգային-լիբերալները տարել են երկու տեղ, ազատամիտները և ժողովրդական կուսակցութիւնը՝ մէկ տեղ, սօցիալ-դէմոկրատները կորցրել են երկու տեղ, լիբերալները և անկուսակցականները տարել են մէկ տեղ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունվարի։ 1-ին հեծելազօրի հրամանատար գնդապետ Ջվօրիկինը նշանակված է Ռօստովի (Դոնի վրա) քաղաքապետի պաշտօնակատար։

22 յունվարի

ԲԵՌԼԻՆ, 21 յունվարի։ Երէկվայ վերաքուէարկութեան ժամանակ սօցիալ-դէմօկրատները կորցրել են երեք տեղ։ Ընդամենը նրանք մինչև օրս կորցրել են 25 տեղ։

ՕԴԵՍԱ, 21 յունվարի։ Երեկոյեան, քաղաքի զանազան տեղերում տեղի են ունեցել յարձակումներ ոստիկանական անդամների վրա։ Առայժմ բռնված են երկու հոգի։

ՀՌՈՄ, 21 յունվարի։ Սիցիլիայում չեղած ցուրտ է տիրում։ Մօտ օրերս գտել են երկու մարդու սառած դիակներ։

ՎԱՐՇԱՎԱ, 22 յունվարի։ Մարիավիտները որոշել են այսուհետև աստուածպաշտութիւնը կատարել լեհերէն լեզւով, փոխանակ լատիներէնի։

ԽԱՐԲԻՆ, 21 յունվարի։ Ռուս և չին իշխանութիւնների ներկայութեամբ հանդիսաւոր կերպով բացվեց ռուսաց գեներալ—հիւպատոսարանը։

ՊԻԱՏԻԳՕՐՍԿ, 21 յունվարի։ Էսէնդուկում, օֆիցէր Ֆէտիւշկինի միջոցներով հաստատվում է ֆիզիքական միջոցներով բժշկելու ինստիտուտ, որ ունենալու է նաև գեղեցիկ կլինիկական բաժին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերքաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզաուղ. հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներարգային։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՁԷԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ց. Գուրգէնօվ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
ՆՐԵԿՈՆՆԵՐԸ
Կ. Ի. ԳՁԷԼԻԵՎ—6½—7½ ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀՈՎՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա, Սեմեօնօվսկի փողոց № 16։
(ու. կ. չ.) 14—20

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԶՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ.
Տէլէֆօն № 1087
Սօլօլակ, Լերմօնտօվսկայա փող., 16.
(ա. օ.) 90—150

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճաւաձէի № 36
54—100

Մի ինտելիգենտ ցանկանում հայուհի է մանել հայ ընտանիք—երեխաների մօտ ոչ փոքր հին տարեկանից, համաձայն է գնալ և ուրիշ քաղաք. ցանկացողները թէ նամակով և թէ անձամբ կարող են դիմել Վօզնեսէնսկայա փողոց, տուն № 18. վերին յարկ, առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 7-ը։
(Ե. հ. կ.) 1—5

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Երևանի հայոց թեմական դպրանոցի հոգաբարձութիւնը համաձայն Վեհափառ Կաթողիկոսի № 1739 կոնդակի թեմական տեսուչ է ընտրելու Երևանի թեմի հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների համար, որպիսի ընտրութիւնը կատարելու է նա եկող փետրվարի 12-ին։
Ընտրելի թեմական տեսուչը լինելու է բարձրագոյն կրթութեան տէր անձն։
Ցանկացողները հրաւիրվում են դիմել հոգաբարձութեանս մինչև վերոյիշեալ ամսաթիւը, ներկայացնելով իրանց վկայականները ու պայմանները։ 1—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Գուրգէնօվի № 7. պօդեզ նօտար Մդիբրօվի։

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը
յայտարարում է, որ իր շինութեան մէջ, Երևանեան հրապարակի վրա, յունվարի 25-ին, ցերեկվայ ժամը 12-ին նշանակված է աճուրդ աւազի, խոշոր աւազի, ջարդած և մեծ քարեր հայթայթելու իրաւունք ձեռք բերելու համար 3-րդ քաղաքամասում Կուր գետի ափին, քաղաքային տան առաջ (նախկին Պապկօվի)։ Մանրամասնութիւնները կարելի է նայել քաղաքային վարչութեան 4-րդ բաժանմունքում, ցերեկվայ ժամը 10-ից մինչև 2-ը։ 2—2

„Գուտտենբերգ“
գրավաճառանոցում վաճառվում են
1) Լևոն Սարգսեանի, «Ժողովրդի կրթութիւնը միզանում», 1892 թ., գինն է 20 կոպ.։
2) Լևոն Սարգսեանի, «Հին ցաւ» (հրապարակախօսական խոհեր). 1900 թ., գինն է 30 կոպէկ։
3) Լևոն Սարգսեանի, «Մի քանի օր Արցախում և Սիւնիքում», 1904 թ., գինն է 20 կոպէկ։
4) Լևոն Սարգսեանի և Կ. Կուսիկեանի, «Մայրենի խօսք» ընթերց. ձեռնարկ, հայերէն-ռուսերէն բառգրքով, գինն է 75 կոպէկ։
5) Սարգիս Սարգսեանի, «Լեզուաբանական հետազօտութիւն Ագուլեաց բարբառի մասին», 2 րուբլի։
6) Բժ. Գարեգին Սարգսեանի, «Վնասակար և օգտակար միկրօբներ», գինն է 20 կ.։
7) Աւանձարի, «Վշտի ծիծաղը», գինն է 70 կ.։
8) Ս. Դանիէլբէգեան, «Կանանց հարցը», գինն է 70 կոպ.։
9) Ջ. Մօլիէր, «Հաջի Բաբայի արկածները», 2 հատոր, գինն է 3 ր. 50 կոպ.։
—
Նոյն տեղ ընդունվում է «Մուրճ» ամսագրի 1907 թ. բաժանորդագրութիւնը։
5—10

ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Երեքշաբթի, յունվարի 23-ին
Հայ դրամատիկ ընկերութեան խումբը
անդամների, փոխանդամների և նրանց ընտանիքների համար
կը ներկայացնէ
ԵՒԳԻՆԷ
Դրամա 3 արար., Շիրվանզադէի
Մասնակցում են տ. տ. Աւետեան, Մայսուրեան, Մելիքեան, Վարդուհի, պ. պ. Աբէլեան, Աղայեան, Աւետեան, Մանուէլեան, Ցաբուտիկեան և ուրիշ.
Սկիզբը երեկոյեան ժամը ճիշտ 8-ին է։
Տեղերի գները 1 րուբլուց մինչև 30 կոպ.։
Հիւրերը անդամների երաշխաւորութեամբ վճարում են ամեն մի տոմսակին 1 րուբլի ևս։
Աշակերտներին չէ թոյլատրվում։
1—1 Ռեժիսոր՝ Յ. Աբէլեան

Մի այրի կին, որի մայրը և 15 տարեկան դուստրը (բարեգործական պրոֆեսիօնալ արհեստանոցի աշակերտուհի) լուրջ կերպով հիւանդ է, խնդրում է բարերարներին օգնել իրան նիւթապէս, կամ հիւանդներից գոնէ մէկին տեղափոխեն հիւանդանոց, որպէս զի ես հնար ունենամ աշխատելու։ Հասցէս՝ 2 уч., Лабораторный переул. д. Кунерта, № 7. Кикнадзе.
(Ե. հ.) 1—2

ԱՆՎԵՐՍԻ
հայ-ուսանողների
ԱԿՈՒՄԲԸ
յայտարարում է, որ նա սիրով կը հաղորդէ երկրում գտնվող հայ երիտասարդներին անհրաժեշտ տեղեկութիւններ Բելգիայի բոլոր բարձրագոյն դպրոցների և մանաւորապէս Անվերսի L'Institut supèrieur de commerce-ի մասին։ Դիմել A. Mianssarian, 90 rue du Palais Anvers, Belgique. 1—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
երկրորդ տպագրութեամբ
Թուաբանական խնդիրներ
և օրինակներ
Մոսկվայի քաղաքային դպրոցների ուսուցիչների
Փոխադրեց և յարմարեցրեց հայ դպրոցների ծրագրին
ԱՐՇԱԿ ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆ
Ա. պրակ. Առաջին և երկրորդ տարի 30 կ.
Բ. պրակ. Երրորդ տարի 30 կ.
Գ. պրակ. Չորրորդ տարի (1 դասարան) 30 կ.
Մամուլի տակն է շուտով լոյս կը տեսնի
Դ. պրակ կոտորակներ—ըստ Շապշնիկօվի և Վալցօվի։
Դիմել՝ «Գուտտենբերգ» գրախանութին կամ ինձ Тифлисъ, Абасъ-Абадская площадь домъ Теймуразова-Спарапетяну.
Գումարով գնողներին զեղջ։
10—10

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8, կանանց համար 12—1 ժամը։
Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Պասկեվիչի փողոցների, № 33/15։
(ա. օ.) 94—100

ՆՈՐ ԽՈՎՈՒՄ Է
ԱՆԹՐԱՑԻՏ
50 պուդ կամ աւելի գնողները Թիֆլիսում ճանապարհի ծախս չեն վճարում։
Նոյնը տեղ ծախվում է նաև ընտիր
ՉՈՐ ՓԱՅՏ
ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ։ Հասցէն՝ Елизаветинская ул. № 127, երկաթուղային վարչութեան կից, պահեստ Տէր-Առաքելեանի։
2—5

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES»
29-ին յունվարի (11-ին փետրվարի ըստ ն. տ.) մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 4-ին, առաջնակարգ «La Crimée» շոգենաւը, հանդիպելով՝ Տրապիզօն, Սամսոն, Կ. Պօլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Քանէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։
Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, նոյնպէս և մինչև Շանգհայ (Չինաստանում), Հեռաւոր Արևելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով։
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալերէյում թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ թիւ 608։ Գրասենեակը բաց է 10—2 ժամը ցերեկվայ և 5—6-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից։ 1—1

ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՆԵԼ
Թիֆլիսի կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովը յայտարարում է, որ կրկին ստացված է
„ԳԵՂԱՈՒՆԻ“
Զուտ արդիւնքը յատկացրված է յօգուտ հայ տառապեալների։ Ցանկացողները ստանալ այդ պատկերազարդ և շքեղ հատորը, որ գանձերի ամենալաւ զարդն է և գեղարուեստական մեծ հաճոյք է պատճառում, թող շտապեն ուղարկել 4 ր. և ճանապարհածախսի համար 40 կ., ընդամենը 4 ր. 40 կոպ., «Մշակի» խմբագրատունը, «Գուտտենբերգ» գրավաճառանոցը և կամ «Ժամանակի» լրագրի խմբագրատունը։
4—10

Թիֆլիսի Վանաց Մայր եկեղեցու կրօնա-պատմական թանգարանի մնայուն յանձնաժողովը
յայտարարում է, որ 1907 թ, ապրիլ 7-ին տեղի կունենայ
ՂՈՒԿԱՍԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱԽՇՈՒԹԻՒՆԸ
Մրցութեանը մասնակցել ցանկացողները պէտք է իրանց աշխատութիւններն ուղարկեն մինչև առաջիկայ մարտի 1-ը Թիֆլիսի առաջնորդարան՝ մնայուն յանձնաժողովի անունով։
Ղուկասեան մրցանակի նիւթը.—«Պէտք է պատկանի հայ լեզուի, հայ դպրութեան կամ հայ պատմութեան ճիւղերին. այն է հայոց լեզուի և գրականութեան հետազօտութիւն, հին հայ մատենագիրների թարգմանութիւն լուսաբանութիւններով կամ բանասիրական քննադատութիւններով ճոխացրած, ազգային կամ եկեղեցական պատմութեան լուսաբանված հատուածներ, հայաբնակ գաւառների աշխարհագրական տեղագրութիւն, ազգային գեղարուեստի հետազօտութիւն, հայ օրէնսդրութեան կամ կանոնադրութեան վերաբերեալ տեսութիւններ»։
«Մրցանակի չեն կարող ներկայացուիլ, 1) օտար լեզուներից թարգմանութիւններ. 2) դասագրքեր, 3) մի անգամ արդէն որևէ ազգային հաստատութիւնից վարձատրուած երկեր, 4) հին մատենագրութեանց պարզ տպագրութիւններ, 5) մրցման ժամանակից երկու տարի առաջ տպագրուած գործեր»։
Ներկայացուած գործերը պէտք է հայերէն լինին, ձեռագիր կամ տպուած տպագիրները նրնգակսն, իսկ ձեռագիրները մէկ օրինակ։
Մրցանակի արժանացած աշխատութեան հեղինակին տրւում է հինգ հարիւր րուբլի։
Առաջնորդ թեմի և նախագահ մնայուն յանձնաժողովի՝ Գար. Արքեպիսկոպոս
Անդամ մնայուն յանձնաժողովի և քարտուղար Իսահակ Յարութիւնեանց
3—3

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնուող
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4 ամսում։
Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր ուղագրութիւն (стеографія)։
Ընդունելութիւնն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան և 9-ից մինչև 11-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվելու են յունվարի 15-ից, 1907 թ. պարբերական ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։
Դասընթացը աւարտողներին տրվում են ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատտեստատներ։
Դրանից անկախ, բացված է ծիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում Н.В. Абраамяну, Николаевская ул. № 22, ամենայն օր։
Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում
Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին առանց պօստի ծախս վճարելու. Գինն է 3 ր. 50 կոպէկ։ (հ.կ. ե.) 18—20

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатная, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5